

3056

крестьянская
Газета

ԽՈՒՐՄԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

Բ. ՌԵԶՆԻԿՈՎ

Կոլաբորանտայից
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐ ԶՄԵՐ

Յեկեմզ գաախոսություն

ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Դաախոսությունները լույս են տեսնում „Խորհրդային
Հայաստան“-ի պատ. խմբագիր Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ընդհանուր խմբագրությամբ

07
Ռ-28

ՀԿ(Բ)ԿԿԿ Խրատարակչություն — „Խորհրդային Հայաստան“
Յ Ե Ի Կ Վ Ա Ն

1936

07
Ռ-28

ԿՈՆՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ՁՄԵՈՒՑ

19 JUN 2009

Պատասխանությունները լույս են ընծայվում «Խորհրդ. Հայաստան»-ի խմբագրության կից կազմակերպված մեքոդական հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Կրեստյանսկայա Փագեթա»-ի ուսումնական կոմբինատի հրատարակած դատասխանությունները:



Կոլեսեսային-բրիգադային պատի բերքերի խմբագիրների Հայաստանի հեռակա ուսուցման դասընթացների ղեկավար, «Խորհ. Հ.»-ի բանգյուղըրակիցների բաժնի վարիչ՝ Մ. ՄԱՐԾԻԿՅԱՆ

- ԿԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍ-
ՆՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.
- ՈՒԿՐԱՅՆԵՐԵՆ,
 - ԹԱԹԱՐԵՐԵՆ,
 - ԿԱԶԱԿԵՐԵՆ,
 - ՎՐԱՅԵՐԵՆ,
 - ՀԱՅԵՐԵՆ,
 - ՔՈՒՐԴԵՐԵՆ,
 - ՐԱԶԿԻՐԵՐԵՆ:

ԻՆՁԻ ՄԱՍԻՆ Ե ԽՈՍՎՈՒՄ ԱՅՍ ԴԱՍԱԽՈՍՈՒ- ԹՅԱՆ ՄԵՁ

Տարվա յուրաքանչյուր ժամանակն ունի իր առանձնահատկությունները, իր խնդիրները, իր գործերն ու հոգսերը: Այդ ճիշտ է թե՛ քաղաքի, թե՛ գյուղի համար, թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության համար: Վերցնենք թեկուզ ծանր արդյունաբերությանից Կուզնեցկու Ստալինի անվան մետալուրգիական կոմբինատը: Այստեղ ամբողջ տարին աշխատանքը միևնույնն է: Դոմենյան ու մարտենյան հնոցներն աշխատում են որ ու գիշեր անընդհատ, ամբողջ տարվա ընթացքում և կարծես թե նրանց աշխատանքը տարվա յեղանակից կախումն չունի: Բայց այստեղ ել ձմեռը մի քիչ տարբերվում է ամառվանից: Խիստ սառնամանիքների ժամանակ հանքը սառչում է, դանազան հարմարանքները հեշտությամբ են փչանում և այլն: Այդ ամենը հարկավոր է նախատեսել և այնպես անել, վոր սառնամանիքները չխանգարեն նորմալ աշխատանքը:

Մենք դիտմամբ որինակ բերինք արդյունաբերության այնպիսի ճյուղից, վորն ամենից քիչ է նման գյուղատնտեսական արտադրությանը: Դրանով մենք ուղեցինք ցույց տալ, վոր նույնիսկ այնտեղ տարվա յեղանակի փոփոխությունն ունի իր նշանակությունը: Յեղանակի փոփոխությունն է՛լ ավելի մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության մեջ: Այստեղ ձմեռը

(305b)

22968-59

ամառվանից կամ աշնանից շատ ավելի խիստ և տարբերվում: Գյուղատնտեսական արտադրութեան բնույթն այնպես է, վոր նա կախված է տարվա յեղանակից: Հայտնի յե, վոր ձմեռը չեն հերկում, իսկ գարնանը՝ հունձ չեն անում: Գյուղատնտեսական աշխատանքները հավասարաչափ չեն բաշխվում ամբողջ տարվա ընթացքում: Ձմեռը գյուղատնտեսութեան մեջ հենց այն ժամանակն է, յերբ շտապ ու կարևոր աշխատանքներ ավելի քիչ կան, քան ամառը, գարնանը և աշնանը: Ուրեմբն՝ կոլտնտեսային պատի թերթն ի՞նչ պետք է անի ձմեռը, ինչի՞ մասին պիտի գրի, ի՞նչ բանի վրա պիտի ուշադրութիւն դարձնի: Ճի՞շտ է, վոր կոլտնտեսային պատի թերթը ձմեռը բան չունի գրելու:


Ահա հենց այս բոլոր հարցերին ել պատասխան է տրվում սույն դասախոսութեան մեջ:

Ի հարկե, դասախոսութեան մեջ չի կարելի ճշտորեն նշել, թե այսինչ որը, այսինչ տասնորյակում կամ այս սինչ ամսին յուրաքանչյուր պատի թերթ ինչի մասին պիտի գրի: Այդ հնարավոր չի և պետք էլ չի: Նույնիսկ չի կարելի լիովին թվել ու սպառել այն բոլոր հարցերն ու խնդիրները, վորոնցով պետք է զբաղվի պատի թերթը: Սույն դասախոսութեան մեջ դուք այդ չեք դասի: Այստեղ պետք է տրվեն միայն այն գլխավոր խնդիրները, վորոնցով ձմեռը պիտի զբաղվի պատի թերթը, ինչ խնդիրներ են կանգնած նրա առաջ և ինչպես պիտի թերթը յուժի այդ խնդիրները:

Կոլտնտեսութեան համար ձմեռը առանձնահատուկ ժամանակ է, նշանակում է՝ կոլտնտեսային կամ բրիգադային պատի թերթի առաջ ել դրվում են նոր, հատուկ խնդիրներ, վորոնք տարբերվում են ամառվա կամ աշնան խնդիրներից: Հենց դրանց մասին ել պիտի խոսենք:

ՊԱՏԻ ԹԵՐԹԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՈՆԱՎՈՐ ԼՈՒՅՍ ՏԵՍՆԻ

Գաղտնիք չէ, վոր շատ կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթեր գեպքից յոյն տեսնում: Կոլտնտեսականները դաշտ են դուրս գալիս ցանքի թերթը



Թը լույս է ընծայվում: Հետո թերթը մոռացվում է մինչև մի ուրիշ նշանավոր որ կամ տոն: Այսպիսի դեպքում պատի թերթը իր խնդիրները չի կատարում: Նույնիսկ լույս ընծայած համարները հետաքրքիր չեն, վորովհետև արդեն առաջուց կարելի յե իմանալ, թե այդպիսի թերթում ինչ պիտի գրվի: Այստեղ ընդհանուր խոսքերով պիտի ասեն, վոր հարկավոր է լավ ցանք անել, «գերազանց», կարճ ժամանակում և այլն: Բայց, վորովհետև թերթը սակավ է լույս տեսնում, միայն հանգիստավոր որերին, դրա համար ել նրա մեջ կոնկրետ գործերի ու դեմքերի մասին չեն գրում, այլ գրում են ընդհանրապես ցանքի և ընդհանրապես նրա վորակի մասին: Յեվ, հասկանալի յե, վոր այդ քիչ է գրավում ընթերցողներին և պարզ է, վոր քիչ է ազդում գործի ընթացքի վրա:

Կրկնում ենք, մեղ մոտ քիչ չեն այդպիսի թերթերը: Ե՛լ ավելի շատ են այն թերթերը, վորոնք աշխատանքի յեռուն շրջանում, այսինքն՝ բերքահավաքի կամ պանիայի ընթացքում կանոնավոր են լույս տեսնում, բայց հենց վոր բերքահավաքն ու հացի հանձնումը վերջանում է, այդ թերթերն ել մոռացվում, «վակվում» են: Հաճախ է պատահում, վոր դեկտեմբեր ամսին տեսնում ես մի պատի թերթ, վորի նյութերը գլխավել են սեպտեմբեր ամսին:

— Ինչո՞ւ յե ձեր թերթն այսպես ուշուշ լույս տեսնում, — հարցնում ենք խմբագրին:

— Մեր թերթն ամեն յերեք որը մեկ լույս եր տեսնում, — պատասխանում են մեզ, — բայց բերքահավաքը վաղուց ենք ավարտել և դրանից հետո թերթը չենք նորոգել:

Այդպիսի խմբագիրը պարզ է, վոր սխալ է վարվում:

Մինչդեռ պատի թերթը բերքահավաքի կամ պանիայից հետո պակաս գործ չունի, քան հենց բերքահավաքի ընթացքում: Միայն աշխատանքի բնույթն է տարբեր: Կոլտնտեսականները միշտ ել պատի թերթի պահանջ ունեն, դրա համար ել պատի թերթը պետք է

լույս տեսնի կանոնավոր կերպով և ամառը, և ձմեռը և աշնանը և գարնանը:

Այն կոլտնտեսութուններում, ուր պատի թերթը յերբեմն կանոնավոր է լույս տեսնում, իսկ յերբեմն ել արջի պես ձմռան քուն է մտնում, այդ միայն ցույց է տալիս, վոր այդ թերթերի խմբագիրները հետ են մնացել: Կոլտնտեսութունների աշխատանքներում կամ պանխաներով գործ անելը վաղուց արդեն դատապարտված է, իսկ պատի թերթերի աշխատանքում դեռ պահպանվել է: Մինչդեռ լավ հայտնի յե, վոր գրոհներով աշխատելը վնասակար է: Հարկավոր է ամեն մի աշխատանք առաջուց նախապատրաստել և կատարել առանց իրարանցման, կանոնավոր ու նախամտածված: Ժամանակն է գրոհայնությանն ու կամպանիականությանը վերջ տալ նաև պատի թերթերի աշխատանքում:

Այն պատի թերթը, վոր կանոնավոր, վորոչիված ժամկետներին չի լույս տեսնում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ժամկետից առաջ, այլ լույս է տեսնում ընդհատումներով, անխուսափելիորեն կորցնում է իր ազդեցութունը: Այդպիսի թերթը հենց ինքն իր ընթերցողներին սովորեցնում է հետաքրքրվել իրենով և նրա մեջ չփնտրել որևէ այլոց հարցերի պատասխանը: Իսկ առանց ընթերցողների՝ թերթը բանի պետք չի:

Կանոնավոր լույս չտեսնելու դեպքում թերթը կորցնում է նաև իր թղթակիցներին, կորցնում է իր ակտիվը: Յեթե կոլտնտեսականը վստահ չէ, վոր իր թղթակցութունը վաղը, մյուս օրը կամ յերեք օրից հետո կտեղավորվի թերթում, յեթե նա գիտի, վոր թերթը վերջացրել է իր հերթական «գրոհը» և հիմա հայտնի չէ, թե ել յերբ լույս կտեսնի, ել ինչո՞ւ պիտի նյութ տա թերթին:

Իսկ թերթի ուժը չե՞ վոր իր մշտական թղթակիցներն ու ընթերցողներն են: Վորքան ավելի շատ թղթակիցներ ու ընթերցողներ ունենա թերթը, այնքան արվելի հետաքրքիր, ուժեղ ու ազդեցիկ կլինի նա:

Շատ պատի թերթերի խմբագիրներ պատճառ են բռնում, թե բերքահավաքի կամ ցանքի ժամանակ

թերթ լույս ընծայելն ավելի հեշտ է: Մասամբ այդ ճիշտ է: Ամեն մեկը գիտե, թե բերքահավաքի ժամանակ թերթում ինչի մասին պիտի գրել. մերկայնել լողերին, ոգնել մրցմանը, պայքարել կորուստների դեմ, մտրակել հետ մնացողներին, խրախուսել առաջավորներին և այլն:

Բայց ահա, բերքահավաքը վերջացել է, հացի հանձնման պլանը կատարված է և կալն ավարտված: Ել ինչի՞ մասին գրել և ինչի՞ համար պայքարել:

Ինչպե՞ս թե ինչի: Միթե՞ կոլտնտեսութունում այլևս աշխատանք չկա: Միթե՞ բերքահավաքն ավարտելուց հետո այլևս վոչ մի խնդիր չկա: Իսկ յեթե կոլտնտեսութունը գործեր ունի, նշանակում է գործ ունի նաև կոլտնտեսային պատի թերթը: Թվում է, թե պարզ է: Ճիշտ է, այժմ գրելիք խնդիրներն այնպես աչքի չեն ընկնում ինչպես բերքահավաքի ժամանակ: Սակայն դրանք ել այնպիսի խնդիրներ են, վորոնք պետք է լուսարանել նրանի թերթում:

Բերքահավաքն ավարտվել է, բայց աշնանացանը դեռ շարունակվում է, սկսվել է աշնանավարը, շուտով սկսվելու յե բերքի բաշխումը, ավարտվում է ամառվա շինարարութունը, անասնապահական ֆերմաները նախապատրաստվում են ձմրանը: Մի՞թե այս բոլորի վրա թերթն ուշադրութուն չպիտի դարձնի: Մի՞թե այս ամենի մասին քիչ նյութ կա գրելու: Ճիշտ է, թղթակցութուն ստանալը դժվարանում է, վորովհետև կոլտնտեսականներն աշխատում են զանազան վայրերում, տարբեր գործի վրա, և վոչ թե բոլորը միասին՝ դաշտում: Սակայն այդ այնքան ել մեծ դժվարութուն չէ, յեթե թերթն ունի իր ակտիվը, իր գյուղթղթակիցները:

Դե լավ, — կասեն մեզ, — բերքահավաքից հետո ել թերթն զբաղվելու բան ունի, այդ աշնանային աշխատանքներն են: Բայց ահա՛ աշնանացանն ու աշնանավարն ել կատարվեցին, աշնանային բոլոր աշխատանքներն ավարտվեցին, սկսվեցին սառնամանիքները, ձյուն յեկավ, սկսվեց ձմեռը: Այդ ժամանակ կոլտնտեսային պատի թերթն ի՞նչ պիտի անի:

Ահա հենց այդ մասին ել պիտի խոսենք հիմա: Սա-
կայն, մինչ այդ պայմանավորվենք, վոր և՛ գարնանը՝
ցանքի ժամանակ, և՛ ամառը՝ խոտհնձի, քաղհանի,
բերքահավաքի ժամանակ, և՛ աշնանը՝ աշնանային աշ-
խատանքների ժամանակ, և՛ ձմեռը թերթը պետք է
լույս տեսնի կանոնավոր, պարբերաբար: Յեթե թեր-
թը կանոնավոր չի լույս տեսնում, այլ զեպքից զեպք
նա չի կարող ազդել կոլտնտեսութեան գործերի վրա,
չի կարող ինչպէս հարկն է, ոժանդակել կոլտնտեսու-
թեան բոլընիկյան ամրապնդմանը:

ՁՄԵՌԸ ՀԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ ՁՄԵՌԸ
ԿՈՒՏՆԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերը մենք ասացինք, վոր կոլտնտեսականները միշտ
եւ իրենց կոլտնտեսային պատի թերթի պահանջն ունեն:
Վորտե՞ղից է ծնունդ առնում այդպիսի պահանջը: Այդ
հարցին պատասխանելու համար ամենից լավն է՝ հա-
մեմատել հին գյուղը նոր, կոլտնտեսային գյուղի հետ:
Իսկապէս, ինչո՞ւ հեղափոխութեանից առաջ գյու-
ղերում պատի թերթի անունն անգամ չեյին լսել: Իհար-
կէ, դրա առաջին պատճառն այն է, վոր հեղափոխու-
թեանից առաջ գյուղացիք չեյին կարող բացահայտ կեր-
պով քննութեան առնել իրենց կարիքները, իրենց գոր-
ծերը, չեյին կարող ազատ խոսել քաղաքականութեան
մասին, վորովհետեւ ցարական ռեժիմի քաղաքականու-
թեանն ուղղված էր ընդդէմ բանվորների ու գյուղացի-
ների և ցարական լծի դէմ արտահայտած ամեն մի մըտ-
քի համար մարդկանց հալածում, բանտ եյին նստեց-
նում կամ աքսորում:

Բացի այդ, գյուղում գրագետ մարդ քիչ կար: Վոչ
միայն թերթում գրել, այլև թերթ կարդալ համարյա
թե՛ վոչ վոք չէր կարող:

Հեղափոխութեանից առաջ հասարակական կյանքը
գյուղում շատ թույլ էր զարգացած: Յուրաքանչյուրն
ապրում էր անձատ՝ իր առանձին աշխարհով: Մեկը
մյուսի թշնամին էր, կամ, ծայրահեղ դեպքում մրցա-

կիցը: Հին գյուղում լավ բան չէր համարվում «քիթն
ուրիշի գործերի մեջ խոթելը»:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխութեանը
գյուղացիներին հող ու ազատութեան տալով, բանվոր-
ներին ու գյուղացիներին դարձնելով կյանքի տերը՝
արթնացրեց գյուղի հասարակական կյանքը, գյուղացի-
ներին մասնակից արեց քաղաքական ակտիվ գործունե-
ութեան:

Հասարակական գործերի աճման հետ միասին՝ գյու-
ղացիների մեջ աճեց նաև թերթի պահանջը: Դյուղա-
ցիներն սկսեցին ավելի շատ տպագիր թերթեր ստանալ,
առաջ յեկան գյուղթղթակիցներ, առաջ յեկան նաև
պատի թերթերը:

Պատի թերթերի դերն առանձնապէս մեծացավ հա-
մատարած կոլեկտիվացման սկզբից:

Կոլտնտեսութեանում գլխավոր գործերը հանրային
գործերն են: Այն, ինչ անհատական տնտեսութեան ժա-
մանակ բացի տնտեսութեան տիրոջից ուրիշ վոչ վոքի
չէր վերաբերում—որինակ՝ ինչպէս է ցանում նա,— կոլ-
տնտեսութեանում բոլորին է վերաբերում: Անհեթեթու-
թեան կթվա, յեթե կոլտնտեսականին հարցնեն, թե նրա
բրիգադն ինչպէս է ցանում և նա պատասխանի թե «խմ
ինչ գործն է, դա ինձ չի վերաբերում»: Նա այդպէս չի
եւ պատասխանի, վորովհետեւ կոլտնտեսութեան և իր
յեկամուտի չափը կախված է նրանից, թե ինչպէս են
ցանում նրա բրիգադը, նրա հարելաններն ու ընկերու-
րը: Յեթե նրանք վատ են ցանում, նշանակում է բերքը
պակաս կլինի և աշխորին քիչ հաց կընկնի:

Կոլտնտեսութեան մեջ յուրաքանչյուրը շահագրգռու-
ված է, վոր վոչ միայն ինքը լավ աշխատի, այլ և
մյուսները: Ի հարկէ, ով վատ է աշխատում, ամենից
առաջ ինքն իրեն է մնասում, բայց նա վորոշ չափով
մնասում է նաև մյուսներին: Կոլտնտեսութեանում հա-
սարակական ներգործութեանը խոչոր ուժ է ստանում:
Իսկ թերթը հենց այդպիսի ներգործութեան զենք է հան-
դիսանում, հետ մնացողների վրա առաջավորների կող-
մից ներգործելու զենք:

Ընկեր Ստալինն ասել է, վոր մամուլն ամենատուր և ամենաուժեղ զենքն է կուսակցութեան ձեռքում: Այդ վերաբերում է նաև պատի թերթերին, յեթե տեղական կուսակցական կազմակերպութիւններն իսկապես ղեկավարում են այդ թերթերը:

Նշանակում է, մենք պարզեցինք, վոր հենց կոլեկտիվ արտադրութեան հիմքում, կոլտնտեսային կյանքի հիմքում է գտնվում թերթ ունենալու պահանջը: Իսկ յեթե այդ այդպես է, ապա միանգամայն պարզ է, վոր ձմեռը ևս թերթն անհրաժեշտ է, վորովհետև, չե՞ վոր ձմեռը կոլտնտեսութիւնում արտադրական ու հասարակական կյանքը չի դադարում:

Հին գյուղում ձմեռը դատարկ ժամանակ էր համարվում: Ձի կարելի ասել, թե գյուղացին ձմեռը վոչ մի աշխատանք չուներ: Վորոչ աշխատանք կար՝ անասուններին խնամել, գոմաղբը դաշտ տանել և այլն: Բայց, չե՞ վոր այդ ամենը մեծ աշխատանք չէր, շատ ոգուտ չէր տալիս: Տեխնիկայի հետամնացութեան պատճառով ամառը գյուղացին ճաքում էր աշխատանքից, իսկ ձմեռը համարյա անելիք չէր ունենում: Տնտեսութիւնը մեծ արտադրողականութիւն չուներ և գյուղում շարունակ ավելորդ բերաններ էյին լինում: Ձմեռը գյուղում կյանքը համարյա կանգ էր առնում:

Բոլորովին տարբեր է այժմյան կոլտնտեսային գյուղը: Կոլտնտեսութիւնում կյանքը յեռում է նաև ձմեռը: Ստորև մենք ավելի մանրամասն կընենք ձմեռվա աշխատանքների տարբեր տեսակները, իսկ առայժմ կտրեմք է պարզել, թե ինչու ձմեռն այլևս «դատարկ ժամանակ» չի գյուղում:

Վերջենք մեքենայացումը: Տեխնիկայես մեր գյուղատնտեսութիւնը շատ է առաջ գնացել: Մեքենայացումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականութիւնը, աշխատանքն ավելի կուլտուրական է դարձնում և այն հավասարապես բաժանում է տարվա բոլոր ժամանակների վրա: Մեղ մոտ, որինակ, քիչ չեն այնպիսի խորհանտեսութիւններ, վորոնք ամբողջ բերքահավաքն ավարտել են 8—10— օրում: Վորտե՞ղ և յե՞քր

է տեսնված, վոր 10 հազար հեկտարի բերքը հավաքեն այդքան կարճ ժամանակամիջոցում: Իհարկէ, առանց մեքենաների, առանց կոմբայնների այդ բոլորովին անհնարին էր: Ամբողջ բերքահավաքը, ներառյալ նաև հացն էլեվատորին հանձնելը, կատարված է ընդամենը 10 օրում:

Սակայն այդ 10 օրվա համար ամիսներով նախապատրաստական աշխատանք կատարվեց: Մեքենաները նախապատրաստելու և վերանորոգելու համար, մարդկանց նախապատրաստելու համար, ի հարկէ, ավելի շատ ժամանակամիջոց էր հարկավոր, քան այդ մի տասնորյակը: Սակայն այդ ժամանակն անմիջակա՞նորեն բերքահավաքի հետ չի կապված: Մարդկանց նախապատրաստելու համար կարելի յեր ոգտադործել ձմեռվա ամիսները և նույնիսկ անսլայման այդ պետք է ձմեռն արվեր, այսինքն՝ նախորոք պետք էր և մեքենաները վերանորոգել և կոմբայնավարներին սովորեցնել:

Խորհանտեսութեան կյանքից վերցրած այս օրինակը նշանակալից չափով պետք է կիրառվի նաև կոլտնտեսութիւններում: Մի՞թե կոլտնտեսութեանը հարկավոր չէ մարդկանց սովորեցնել, հարկավոր չէ մեքենաներ վերանորոգել, նախորոք պատրաստվել բերքահավաքին:

Իր տնտեսութեան աղքատութեան հետևանքով մենտոնտեսի վոտն ու ձեռը կապված էր: Տարվա մեծ մասը նրա տնտեսութիւնն անարտադրողական էր. կուղես աշխատի, կուղես՝ չե՝ ձմեռն այդ տնտեսութիւնից բան չես ստանա: Յեվ, սովից չմեռնելու համար, չքավորներն ստիպված էյին ձմեռը մի վորեկ կողմնակի աշխատանք գտնել, յեթե միայն կարելի լիներ այդ: Այժմ կոլտնտեսութիւնը կարող է մարդիկ հատկացնել կողմնակի աշխատանքներին, բայց գյուղում մնացողներն ել կարող են աշխատանք գտնել և այդ աշխատանքը նրանց լավ յեկամուտ կտա: Չե՞ վոր աշխորը նույն արժեքն ունի և՛ ամառը և՛ ձմեռը:

Կոլտնտեսութիւնը վոչ միայն աշխատանքի արտա-

դրողականութիւնն և բարձրացնում, այլև յեկամտի նոր
աղբյուրներ և բաց անում և ստեղծում և բանվորական
ձեռքերի գործադրութեան նորանոր հնարավորութիւն-
ներ:

Հաստատապես կարելի յե ասել, վոր նոր դյուղում
ձմեռը նույնքան լի յե աշխատանքով ու կյանքով, վոր-
քան տարվա մնացած ժամանակները:

Այժմ ավելի մանրամասն քննենք պատի թերթերի
մի քանի խնդիրները ձմեռվա ընթացքում:

ՁՄԵՌՆ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՖԵՐՄԱՅՈՒՄ

Շատ կոլտնտեսային ֆերմաներ ունեն իրենց պատի
թերթը: Այդ թերթերը գլխավորում են կթվորների
մրցութիւնը, պայքար են մղում կաթնատուութեան
բարձրացման համար, գոմերի մաքրութեան համար և
այլն:

Բայց ընդհանուր կոլտնտեսային թերթն ինչպե՞ս
պիտի լուսաբանի անասնապահական ֆերմաների աշ-
խատանքը:

Ամենից առաջ բոլոր կոլտնտեսականներին պետք է
հետաքրքրել այն խնդրով, թե ինչ է կատարվում ֆեր-
մայում: Կոլտնտեսականը պետք է իմանա, թե ինչ է
կատարվում տվյալ ֆերմայում, ինչ է տալիս այդ ֆեր-
ման կոլտնտեսութեանը, ինչ յեկամուտներ են ստաց-
վում նրանից, ինչպես է գնում այնտեղ աշխատանքը և
այլն: Վորոչ կոլտնտեսութիւններում, վորտեղ ֆերման
նոր է կազմակերպվել, այդ ֆերման ղեկուս մեծ յեկա-
մուտ չի տալիս: Ընդհակառակն, յերբեմն անհրաժեշտ
է լինում, տնտեսութեան մյուս ճյուղերից— ասենք՝
դաշտավարութիւնից ստացած յեկումուտներից վորոչ
միջոցներ տրամադրել ֆերմային: Սակայն, յեթե ֆեր-
ման այդ տարին մեծ յեկամուտ չտվեց, չավելացրեց
աշխարհի արժեքը, ապա, հավանորեն նա յեկամուտ
կտա հետևյալ տարին, կամ մի քանի տարի հետո:

Այդ մասին պիտի պատմել թերթում: Պետք է ման-
րամասնորեն բացատրել ֆերմայի յեկամուտի վաճառ-

թեան պատճառները: Պետք է պարզել— արդյոք դրա
պատճառն ա՞յն է, վոր ֆերման ղեկ շատ փոքր է և նրա
ամբողջ յեկամուտը ծախսվել է նոր անասուններ գնելու
վրա, թե՞ պատճառն այն է, վոր ֆերմային կցված մար-
դիկ վատ են աշխատում: Չի խանգարի պարզաբանել
ֆերմայի տարեկան ճիշտ հաշվեկշիռը: Անասնապահա-
կան ֆերմայի վարիչին, կամ կոլտնտեսութեան նախա-
գահին, կամ հենց հաշվապահին պատվիրեցեք մի վաճ-
րիկ հոգիված գրել կաթնապրանքային ֆերմայի մոտ ա-
պագայի մասին: Թող նրանք պատմեն, թե ֆերման
քանի կով պիտի ունենա, ինչպիսի կաթնատուութեամբ,
ինչ յեկամուտ պիտի ստացվի ֆերմայից և այդ յեկա-
մուտը վորքան կավելացնի աշխարհի արժեքը: Այն ժա-
մանակ կոլտնտեսականը կիմանա, թե կոլտնտեսու-
թիւնն ինչի համար է պայքարում: Այդ ղեպըում կոլ-
տնտեսականն ավելի լավ կվերաբերվի ֆերմային և ա-
վելի շարժ հոգ կտանի, վոր նա լավ աշխատի:

Իսկ այդ քիչ բան չէ: Յերբ կոլտնտեսականներն
այդպես ուշադիր են լինում ղեպի ֆերման, ավելի հեշտ
են վերացվում թերութիւնները և ավելի լավ է կար-
գավորվում գործը:

Ֆերմայի մասին թերթում գրելը կարևոր է մանա-
վանդ այն պատճառով վոր այս տարի մշակվել
ու հաստատվել է անասնապահութեան զարգացման պե-
տական պլան: Այդ պլանը վերաբերում է յուրաքան-
չյուր կոլտնտեսութեանը, հետևապես ամեն մի կոլտն-
տեսական պիտի իմանա այն: Թերթը պարտավոր է հե-
տևել և ոգնել այդ պլանի կատարմանը:

Անասնապահութեան զարգացման պետական պլանի
հիմքը մատղաշների աճեցման պլանն է: Նշանակում է՝
թերթը պետք է հատուկ ուշադրութիւն դարձնի մատ-
ղաշների վրա: Հարկավոր է գրել, թե այս տարին կոլ-
տնտեսութիւնում քանի մատղաշ պիտի աճեցվի և ինչ
տեսակի, ով է պատասխանատու այդ գործի համար,
լա՞վ են աշխատում մատղաշներին կցված մարդիկ:

Կարելի յե թւթակցութիւն տեղավորել լավագույն
հորթապահի մասին, որինակ, այսպիսի վերնագրով.

«Անցյալ տարի իմ հորթերից վոչ մեկը չսատկեց: Յեռնչպե՞ս հասա այդ բանին»:

Կամ թե՛ այսպիսի մի թղթակցություն. «Ինչո՞ւ հորթապահ Արամյանը շատ հորթ ե սատկեցրել»:

Նախորոք պետք է Ֆերմաներում մրցություն ծափալել հորթերը, գառները, գոճինները լավագույն կերպով պահպանելու ուղղությամբ:

Կովերի, վոչխարների ու ձիերի մասսայական ծինն սկսվում է ձմեռվա յերկրորդ կեսին—գարնանամտին: Սակայն այդ գործին պետք է նախորոք պատրաստվել: Պատի թերթում մի քանի թղթակցություն պիտի տեղավորել այն մասին, թե կովերի ու վոչխարների գոմերում պատրաստված են արդյոք առանձին ծնարաններ:

Անասնապահական Ֆերմաներում աշխատող կոլտընտեսականների վաստակն ամբողջովին կախված է իրենց աշխատանքից, այսինքն՝ կթի անասունների կաթնատվությունից, դիրությունից, մատղաչների խնամքից: Չեր կոլտնտեսության Ֆերմաներում արդյոք այդպե՞ս է դրված գործը: Արդյոք Ֆերմաներում աշխատող կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները գիտե՞ն, վոր այդ ձևով պիտի դրված լինի իրենց աշխատանքի վարձատրությունը:

Դեռ կան այսպիսի Ֆերմաներ, վորտեղ աշխատանքի կազմակերպումն ու վարձատրությունը գեռես ճիշտ չեն: Թղթակցություն տեղավորեցեք այսպիսի հարցով. «Անասնապահ ընկերներ, դուք գիտե՞ք արդյոք, թե ձեզ ինչի համար, քանի ախոր պիտի տրվի», և պատի թերթում տեղավորեցեք այդ հարցերի պատասխանը, պայքարեցեք մինչև վոր Ֆերմաներում աշխատանքի ճիշտ նորմավորում և վարձատրություն հաստատվի:

Իսկ յեթե ձեր կոլտնտեսությունում այդ գործերը կարգին են և աշխորերը ճիշտ են գրանցվում, վերցրեք յերկու կոլտնտեսուհի կամ կոլտնտեսական, վորոնք միանման աշխատանք են կատարում. դրանցից մեկը վերցրեք այնպիսին, վորն ամենից շատ է աշխատում, մյուսը՝ վոր ամենից քիչ է աշխատում և նրանց հետ դրույց ունեցեք. ինչո՞ւ մեկը շատ աշխոր ունի, մյուսը՝

քիչ: Մենք շահագրգռված ենք, վոր Ֆերմայում բոլոր աշխատողները շատ վաստակեն: Այդ նշանակում է՝ կաթնատվությունը բարձր կլինի, մատղաչները լավ կպահպանվեն, անասունները գեր կլինեն: Նշանակում է՝ Ֆերմայում վատ աշխատողներին վոչ միայն ամթթանք պիտի տալ, այլև պետք է ցույց տալ, վոր վատ աշխատելով հենց իրենք շատ բան են կորցնում, վոր վատ աշխատանքը խփում է և՛ կոլտնտեսության շահերին, և՛ կոլտնտեսականների շահերին:

Յեթե վորեւե մեկը վատ է աշխատում անկարող, անփորձ լինելու պատճառով, թերթը պետք է ոժանդակի՝ առաջավորների փորձը հետ մնացողներին հաղորդելու գործին: Դրա համար վոչ միայն լավագույն հարվածայինների թղթակցությունը պիտի տպել «Ինչպես եմ աշխատում յես» նյութի մասին, այլև այնպես պիտի անել, վոր անասնաբուժը մարդկանց աշխատել սովորեցնի:

Թղթակցություն տեղավորեցեք այն մասին, թե անփորձ մարդկանց անասնաբուժն ինչպես է աշխատել սովորեցնում և վոչ միայն անասնապահական խմբակում, այլև ամենուրեք, գոմերում, աշխատանքի ընթացքում: Յեթե նա այդ գործը վատ է կատարում, քննադատեցեք, յեթե լավ է կատարում, թող հենց ինքը թերթի միջոցով պատմի բոլոր կոլտնտեսականներին, թե ինքն ինչպես է կարողացել լավագույն ձևով կազմակերպել Ֆերմայի աշխատանքը:

Այնուհետև՝ գոմերի մասին: Կոլտնտեսություններից շատերն արդեն կառուցել են լավ գոմեր: Սակայն դեռ շատ կան նաև հին, խարխուլ գոմեր: Թերթը պետք է պայքար սկսի այդ հին գոմերը տաք պահելու համար: Հաճախ շատ քիչ աշխատանք է պահանջվում հին շենքի ծակ ու ծուկը փակելու համար, մինչդեռ այդ փորրիկ աշխատանքը կտաքացնի գոմը, իսկ դրա հետևանքով զգալի չափով կբարձրանա անասունների կաթնատվությունը:

Սակայն, նույնիսկ նորակառույց գոմ ունեցող կոլտնտեսություններում ել քիչ թերությունների չեն լի-

նում. գոմերը կեղտոտ են լինում, կովերը չեն մաքրվում և այլն:

Թերթում խիստ քննադատություն պիտի ծախալեք այդ բոլոր թերությունների շուրջ: Թղթակցություն պիտի տեղավորել, որինակ՝ այսպիսի վերնագրով. «Նարգիզ կովի պոչն ինչու յե կեղտոտ»: Յեվ այդպիսի թողթակցության մեջ կոնկրետ պետք է նշված լինի, թե «Նարգիզ» կովի պոչի կեղտոտության մեղքն ում վրա յե ընկնում: Սա մանրունք չէ: Կոլտնտեսականներին պետք է կուլտուրական անասնապահության վարժեցնել: Ֆերմայում ամեն ինչ պետք է փայլի գեղատան նման:

Վերցնենք ցամքարի հարցը: Այս ևս ամենևին պահաս կարևորություն ունեցող խնդիրը չէ: Ցամքարը լա՞վն է արդյոք, ժամանակի՞ն է փովում, թե վոչարանք այնպիսի «մանրունքներ» են, վորոնցից վերջին հաշվով կախված է ֆերմայի յեկամտաբերությունը:

Ինչպես տեսնում եք, ֆերմայի վերաբերյալ ինչքան ուղես նյութ կարելի յե գտնել թերթի համար: Բայց, թե հատկապես ինչպիսի թղթակցություններ պիտի գրել, ի՞նչ հարցերի մասին՝ այդ կախված է նրանից, թե ինչպես է դրությունը ֆերմայում, ի՞նչ վիճակի մեջ է նա: Սակայն մի բան պետք է հաստատորեն յուրացնել. թերթը չպետք է խորչի մանրունքներից և պետք է պայքարի ֆերմայում լավագույն վիճակ ստեղծելու համար, նրա յեկամտաբերության ու ծաղկման համար:

Կանգ առնենք ևս յերկու հարցի վրա, վորոնք խիստ կարևոր են անասնապահական ֆերմաների համար:

Առաջին հարցը մեքենայացումն է: Վորքան ֆերմաներն ավելի յեն զարգանում, վորքան խոչորանում են և անասունների թիվն ավելացնում, այնքան ավելի գժրախտարար, ֆերմաների աշխատանքի մեքենայացման վրա քիչ ուշադրություն է դարձվում: Մինչդեռ, մեծ թվով աշխատողներ են պահանջվում: Սակայն, նույնիսկ փոքր չափով մեքենայացման գեպում կարելի կլինի աշխատանքն զգալի չափով թեթևացնել և ֆերմայում աշխատողների թիվը կրճատել:

Որինակի համար վերցնենք ֆերմայի ամենածանր աշխատանքներից յերկուսը՝ գոմաղբը դուրս տանելը և ջուր կրելը:

Լավ ֆերմայում գոմի մոտ գոմաղբ չպետք է լինի. այն պետք է փոխադրվի վորոշ հեռավորության վրա: Դրա համար սայլեր ու մարդիկ են հարկավոր: Սակայն հեշտությամբ կարելի յե փայտի ու լուսերի վրա վազոնետներ պատրաստել և գոմաղբը կրել ուր հարկն է: Իսկ այդպիսի «փայտուղի» ու վազոններ պատրաստելու համար մեծ ծախս չի պահանջվում:

Պատի քերթը պետք է կամպակիա սկսի ֆերմայի աշխատանքների մեքենայացման ու ուացիոնալացման համար:

Այժմ քնենք ջրի հարցը: Յեթե անասունները շատ են, ձեռքով ջուր կրելու համար շատ մարդիկ են հարկավոր: Այժմ յելքը համարում են այն, վոր անասուններն են քշում գետը՝ ջրելու: Բայց այդ ճիշտ ձև չի: Սառը ջուրը վնասում է անասուններին և իջեցնում է կաթնատվությունը: Անասունին պետք է տաք ջուր տալ: Այդ ջուրը պետք է նախապես լցվի տաք շենքերում դրված տաշտակների մեջ, վորպեսզի փոքր ինչ տաքանա:

Այս աշխատանքը թեթևացնելու համար շատ կոչտնտեսություններ ջրմուղ են կառուցել, գետից կամ աղբյուրից ջուրը խողովակներով տարել են գոմը. այդտեղ ջուրը լցվում է հատուկ տաշտերի մեջ, տաքանում և հենց գոմի մեջ էլ անասունները ջուր են խմում:

Հարց ենք տալիս. միթե՞ ամեն մի կոլտնտեսություն չի կարող նույն բանն անել: Իհարկե, կարող է: Ամեն մի շրջանում կա գյուղատնտես, կառուցող տեխնիկ, հողբաժին, վորոնց հետ կարելի յե խորհրդակցել և նույն բանը պատրաստել իրենց ֆերմաներում:

Պատի թերթը պետք է ֆերմայի աշխատանքների մեքենայացման նախատեսնողը լինի, պետք է այդ հարցի շուրջը հետաքրքրություն առաջացնի, տեղավորի անասնապահ կոլտնտեսականների ուացիոնալացման առաջարկությունները, դարբինների, տրակտորիստների առաջարկությունները և այլն:

«ՄԱՆԿԱՂԻ ՁՄԵՌԸ ՊԱՏՐԱՍՏԻՐ, ԳՈՒՐԻՐԻՒՄ
ԱՄԱՌԸ»

Կոլտնտեսութեան նորմալ, լավ կազմակերպած աշխատանքը պահանջում է, վոր գարնան բոլոր շտապ աշխատանքները նախորոք պատրաստվեն: Որինակ՝ դարձնանացանը պետք է կատարվի կարճ ժամանակամիջոցում: Սակայն այդ հնարավոր է միայն այն դեպքում, յեթե ամեն ինչ, վոր պահանջվում է ցանքի համար, նախորոք պատրաստված լինի: Ձմեռը հենց այն ժամանակն է, յերբ խնամքով ու մանրամասնորեն պետք է նախապատրաստվեն վոչ միայն գարնանացանը, այլև զայիք դյուղատնտեսական տարվա բոլոր շտապողական աշխատանքները:

Անհատական տնտեսութունում ցանքին կամ բերքահավաքին նախապատրաստվելու շատ բան չկար: Թե գարնանը և թե ամառը բոլոր աշխատանքների գլխավոր «գործիքը» լծկանն էր և գյուղացու կոները: Դարբնոցում սրել տվիր խոլիզ, գերանդիզ սրեցիր ու յուղեցիր և... պրծավ: այս էր ամբողջ նախապատրաստութունը:

Այժմ ամենեւին այդպես չէ: Յանքին կամ բերքահավաքին նախապատրաստվելը բարդ գործ է. այստեղ գործ ունեն գանազան մեքենաների հետ, գանազան տեսակի սերմերի հետ, յարավիզացիայի հետ և նման շատ բաների հետ: Այլ է տեսնիկան այլ է և նրա նախապատրաստումը:

Այս բնագավառից վերցնենք միայն մի քանի հարց, վորոնցով ձմեռը պիտի դբաղվի կոլտնտեսային պատի թերթը:

Ամենից առաջ սերմացուն: Անցել են այն ժամանակները, յերբ ցանքից առաջ կոլտնտեսութունները սերմացու ելին վորոնում, հավաքում ելին ցենտներ-ցենտներ, իսկ յերբեմն ել մի-մի կիլոգրամ: Այժմ յուրաքանչյուր կոլտնտեսութուն իր սերմացույի Ֆոնդը վերցնում է աշնանը, պետութայնը հաց հանձնելուց անմիջապես հետո: Իսկ յեթե կոլտնտեսութունը հացի

հանձնումը կանոնավոր է կատարում, նա, համաձայն որենքի, իրավունք ունի իր սերմացուն սկսի առանձնացնել դեռ հացի հանձնումը լիովին չավարտած:

Սակայն սերմացուն առանձնացնելով հարցը չէ սպառվում: Սերմից սերմ տարբերութուն կա: Մենք ձգտում ենք ցանել տեսակավոր սերմացու: Յուրաքանչյուր շրջանում հասարակ սերմացուն տեսակավորով փոխանակելու հատուկ կարգ կա: Նախորոք կոլտնտեսութայնը հայտնի յե, թե վորտեղ, վորքան և ինչ սերմացու կարող է փոխանակել:

Յեվ ահա, թերթը պետք է հարց դնի, վոր ցանքից դեռ շատ առաջ—սերմացուն փոխանակվի տեսակավորի հետ: Հենց ձմեռվա «յեռուն» շրջանում, յերբ սահնակները համար լավ ճանապարհներ կան, պետք է սկսել սերմացվի փոխանակութունը:

Կարող են ասել.— այդ նախագահի ու բրիգադիրի գործն է, թերթն ի՞նչ գործ ունի այստեղ: Սխալ է այդպես մտածելը: Հենց թերթն է, վոր հասարակական կարծիք պետք է կազմակերպի կոլտնտեսութունում: Յեվ յեթե նախագահն ու դաշտավարական բրիգադները բրիգադիրները մոռացել են և ժամանակին չեն անում այն, ինչ հարկավոր է, թերթը պետք է առաջ մղի այդ գործը, քննադատական թղթակցութուններ տեղավորի, հիշեցնի, ազդեցիկների յելույթներ կազմակերպի թերթում, վորոնք իրենց թղթակցութուններով պիտի հարց տան, թե՛ ինչու յե ձգձգվում սերմացույի փոխանակութունը:

Իհարկե, ազդեցիկները նույն հարցը կարող է անձամբ նախագահին ել տալ, և կտա ել այդպիսի հարց, սակայն այդ այն հասարակական ուժը չի ունենա, ինչ կունենա, յեթե տեղավորի պատի թերթում: Յեթե այդ հարցը բարձրացվի նաև թերթում, կկարգան բոլորը և կարծես թե բոլորը կտան նույն հարցը: Այնպես վոր, այլևս այդ հարցը մոռանալ կամ անուշադիր թողնել վոչ մի կերպ չի կարելի:

Մամուլի ուժը հենց այն է, վոր նա մասսաների

ճայնն է, նա կուսակցութեան հատու զենքն է, մասսաների մասնակցութեանն է հասարակական գործերին, հասարակական ներգործութեան հզոր միջոցն է:

Սակայն սերմացուլի փոխանակութեանն ել զեռ բոլորը չէ:

Յեթե նույնիսկ կոլտնտեսութեան ունեցած սերմացուն ել լալն է, հարկավոր է այն զտել և այն ել, վոչ թե մեկ, այլ դուցե և մի քանի անգամ, վորպեսզի սերմացուլի մեջ վոչ մի աղբ չմնա: Սպա հարկավոր է ստուգել նրա ծլունակութեանը: Յերբ գյուղացին ցանք եր անում իր անհատական հողակտորի վրա, նրա սիրտք ցավում էր յուրաքանչյուր հատիկի համար, վորովհետև սերմից շատ բան է կախված: Չուր չի ասված. «ինչ կցանես, այն կհնձես»: Ինչո՞ւ, ուրեմն, կոլտնտեսականն ավելի քիչ պետք է հող տանի այն սերմացուլի մասին, վոր պիտի ցանի կոլտնտեսութեանը: Միթե դրանից չի կախված իր յեկամուտի չափը: Իհարկե, դրանից է կախված: Նշանակում է կոլտնտեսականը կոլտնտեսութեան սերմացուլի մասին ավելի շատ պիտի հող տանի, քան մենատնտեսն էր հողում իր սերմացուլի մասին: Թերթը հասարակական ուշադրութեանը դարձնելով սերմացուլի ու նրա զտման վրա՝ դրանով իսկ ոգնում է սերմացուլի գործը կոլտնտեսութեանում բարելավելուն:

Նույնը կարելի յե ասել նաև սերմացուլի ախտահանման մասին: Հարկավոր է իր ժամանակին ձեռք բերել ախտահանիչ նյութեր և բոլոր անհրաժեշտ հարմարանքները, մինչդեռ, պատահում է, վոր մարդիկ մտածում են սերմացուն ախտահանել, բայց դրա համար անհրաժեշտ բաները չեն նախապատրաստում: Իսկ յերբ ախտահանելու որերը զալիս են, այլևս վոչինչ չեն կարողանում ճարել: Յեվ այդպես ել ցանում են առանց ախտահանելու: Այստեղ մենք մանրամասն չենք խոսի, թե դրանից ինչ վնաս է գալիս: Հայտնի յե, վոր այդ բերքին մեծ վնաս է հասցնում: Յեվ այդ մասին պետք է գրի կոլտնտեսային թերթը:

Իսկ ինչպե՞ս է ընթանում սերմացուլի ախտահա-

նումը: Ինչպե՞ս է պահվում սերմացուն: Յուրաքանչյուր կոլտնտեսականին հետաքրքիր է իմանալ այդ և թերթը պետք է բոլորին տեղյակ պահի այդ հարցերին: Յեթե սերմացուն վատ է պահվում, նշանակում է՝ պետք է հարց դնել թերթի յուրեքները վերացնելու մասին: Չե՞ վոր վարչութեանն ամեն որ հաշիվ չի տալիս կոլտնտեսականներին:

Յեվ ահա, թերթը պետք է ոգնի վարչութեանը և կոլտնտեսական մասսային տեղյակ պահի, թե ինչ դրութեան մեջ են կոլտնտեսութեան զլխավոր գործերը:

Անկասկած, այդ գործերի շարքին են պատկանում նաև գոմաղբը դաշտ փոխադրելը, ձյունի առաջ պատնեշներ շինելը և այլն:

Խորհրդային միութեան մեծ մասում զեռևս գոմաղբը միակ պարարտանյութն է: Կասկած չկա, վոր հետագայում այնտեղ, ուր այդ անհրաժեշտ է, մենք դաշտերը պիտի պարարտացնենք քիմիական պարարտանյութերով: Սակայն այն ժամանակ ել գոմաղբը կմնա վորպես պարարտանյութ: Գոմաղբի պահպանման ու դաշտ փոխադրելու մասին առանձնապես հող պիտի տանել այժմ, յերբ մեզ մոտ քիմիական պարարտանյութերը զեռևս պակաս են: Սմեն մի գյուղացի լավ գիտի, թե գոմաղբը վորքան է բարձրացնում հողի բերքատվութեանը, սակայն, դժբախտաբար, ամեն տեղ չէ, վոր գոմաղբը ճիշտ են ոգտագործում:

Գիտնական ագրոնոմները հաշիվել են, վոր գոմաղբը վատ պահպանելու և անչնորք փոխադրելու հետևանքով մենք կորցնում ենք նրա վորակական արժեքի կեսից ավելին: Այստեղ ճշտորեն չի կարելի ասել, թե տվյալ շրջանում յերբ պետք է փոխադրել գոմաղբը: Այդ մեր ինդիքների մեջ ել չի մտնում: Պետք է հարցնել տեղական ագրոնոմին, թե ինչպես ոգտագործել գոմաղբը, վորպեսզի այն լավագույն արդյունքներ տա: Թերթի միջոցով պետք է արոպագանդ մղել գոմաղբի պահպանման ու փոխադրման կուլտուրական միջոցների մասին: Յեվ վո՞չ միայն արոպագանդ մղել, այլև աշխատել այնպես անել, վոր իրականում գոմաղբը ճիշտ ոգտագոր-

ծրվի: Մեզ մոտ շատ տեղ կոլտնտեսութիւններն ակըսում են մյուսների առաջ պարծենալ, թե իրենք ավելի շատ գոմաղբ են փոխադրել դաշտը, «դուք, — ասում են նրանք, — 1000 սայլ եք փոխադրել, իսկ մենք՝ 1200»: Այդ, իհարկե, լավ է, բայց դեռ քիչ է: Հարկավոր է վոչ միայն գոմաղբը դաշտ փոխադրել, այլ և այնպէս անել, վոր այդ գոմաղբը շատ ոգուտ տա, իզուր տեղը չկորչի:

Այդ գործին մասնակից արեք բացի ագրոնոմից նաև ձեր այն կոլտնտեսականներին, վորոնք լավ գիտեն գոմաղբի ոգուտը և գիտեն, ինչպէս պետք է ոգտագործել գոմաղբը: Գտեք կուլտուրական, վորձված տնտեսատերեր մի ամբողջ կամպանիա բարձրացրեք գոմաղբի շուրջը: Այդ կարեւոր գործ է:

Թերթը պարտավոր է պայքարել աչքակապության դեմ և պաշտպան կանգնել յուրաքանչյուրին, ով ձրդատում է դեպի լավը, ով պայքար է մղում իսկական կուլտուրական սոցիալիստական հողագործության համար:

Պատի թերթը պետք է աչքի անցկացնի նաև կոլտնտեսության դարձնոցը. ինչպէս է ընթանում գործիքների վերանորոգումը և այն էլ վոչ միայն ցանքի, այլև բերքահավաքի գործիքների: Ժամանակն է հասնել այն դրության, վոր ձմեռվա լինթացքում խնամքով նախապատրաստվեն և՛ դարնանացանի և՛ բերքահավաքի կամպանիաները:

— Դետը նայիր, դենը նայիր, ի՞նչ է, յես հազար աչքանի՞ յեմ ին՞չ է, կասի վորեւե անձարակ խմբադիր:

Սակայն մենք շատ հանդիստ կպատասխանենք նրան: Իհարկե հազար աչք, նույնիսկ ավելին ունես: Վորքան կոլտնտեսական կա կոլտնտեսութիւնում, այնքան գույգ աչք ունես դու: Յուրաքանչյուր կոլտնտեսական կարող է դառնալ իր թերթի ակտիվ թղթակիցը: Այ, դու քաչիր նրանց թերթի աշխատանքների մեջ, հետաքրքրիր նրանց, գործով բույց տուր, վոր թերթում աշխատելը մեծ բան է, — հենց այդ է քո խմբադրական աշխատանքը:

Այժմ քննենք այսպիսի մի հարց. ինչպէ՞ս մարդկանց նախապատրաստել դալիք գարնանային ու ամառային գյուղատնտեսական աշխատանքներին:

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅԵՎ ՊԱՏԻԹԵՐԹԸ

Կոլտնտեսականների մեծ մասն արդեն լավ է յուրացրել, վոր հարկավոր է անընդհատ սովորել, սովորել աշխատել, սովորել բարձրացնել աշխատանքի արտագրողականութիւնը: Ինչ խմբակներ ու դասընթացներ ասես, վոր չկան կոլտնտեսութիւններում: Յե՛վ խոզաբույծների խմբակներ, և՛ թռչնաբույծների, և՛ յարովիզատորների, և՛ բանջարաբույծների, և՛ մեղվաբույծների: Այս ամենը շատ լավ է: Գյուղատնտեսութիւնը կոլեկտիվ տնտեսության մեջ գիտականորեն պետք է վարել: Այդ շարձապետն են հասկացել: Դրա համար էլ այդպիսի ձգտում կա դեպի ուսումը:

Սակայն լավ են աշխատում այդ բոլոր խմբակներն ու դասընթացները: Հենց այդ հարցերով էլ պետք է զբաղվեն կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթերը: Չե՞ վոր գլխավորն ինքնին այդ խմբակները չեն, այլ այն, վոր մարդիկ աճեն այդ խմբակներում և գիտութիւն ձեռք բերեն:

Հասկանալի յե, այնտեղ, ուր ուսուցումը ամենեվին չի կազմակերպված, վորտեղ վոչ մի խմբակ կամ դասընթաց չկա, այնտեղ պատի թերթերն ամենից առաջ պետք է աշխատեն, վոր ստեղծվեն այդպիսի խմբակներ ու դասընթացներ:

Սակայն, այստեղ մենք կխոսենք այն կոլտնտեսութիւնների մասին, վորտեղ արդեն խմբակային պարամունքներ տեղի յեն ունենում:

Կարելի յե պատի թերթում կազմակերպել կոլտնտեսութիւնում յեղած խմբակների ստուգատես և յուրաքանչյուր խմբակի մասին մի դիտողութիւն գրել, թե նա ինչպէս է պարապում, ինչ հաջողութիւններ է ունեցել: Կարելի յե ընտրել 2—3 խմբակ և խիստ քննա-

դատութեան յենթարկել նրանց աշխատանքը, վորից մյուսներն արդեն դաս կառնեն և կկարգավորեն իրենց գործը: Խմբակների ստուգատեսը պատի թերթում կարելի չէ այնպես անցկացնել, վոր յուրաքանչյուր խմբակ յեղույթ ունենա թերթում, վոր յեղույթ ունենան խմբակի անդամները, վոր յուրաքանչյուր խմբակին գնահատական տրվի և պարզվի, թե նրանցից վորն է ամենալավը:

Այստեղ մենք խոսում ենք այն խմբակների մասին, վորոնք անմիջական կապ ունեն արտադրութեան հետ, այսինքն այնպիսիների, վորոնք կազմեր են պատրաստում գալիք աշխատանքների համար: Իհարկէ, թերթն առաջին հերթին դրանցով պետք է դբազվի, վորովհետեւ դրանք ամենակարևորն են:

Մենք չենք խոսում այնպիսի խմբակների մասին, ինչպիսիք են՝ դրամատիկական, յերգեցիկ, յերաժշտական խմբակները և այլն: Այդ խմբակները ևս կարելի են թերթի համար, սակայն այստեղ մենք դրանց մասին չենք խոսում, վորովհետեւ կուլտուրայի հարցերը կուլտուտեսութեանն են և պատի թերթի աշխատանքը այդ ուղղութեամբ, առանձին թեմա չէ և այս դասախոսութեան մեջ չի մտնում: Կուլտուրայի, կուլտուրական աշխատանքի և պատի թերթերի խնդիրների մասին կգրվի առանձին դասախոսութեան:

Սակայն, կա կուլտուտեսականների ուսուցման մի ուրիշ ձև ևս և այդ ձևով մասին էլ կխոսվի առանձին: Ոոսքը վերաբերում է տրակտորիստների և կոմբայնավարների պատրաստմանն ու վերապատրաստմանը: Իհարկէ, տրակտորիստների ու կոմբայնավարների դպրոցները կուլտուտեսութեանների իրավասութեան տակ չեն գտնվում և նրանց մասին կուլտուտեսային պատի թերթում շատ բան գրելու կարիք չի լինում: Սակայն, այդ դպրոցների համար սովորողներ ուղարկվում են կուլտուտեսութեաններից: Ահա հենց դրանց մասին պետք է խոսի պատի թերթը:

Յերբեմն պատահում է, վոր տրակտորիստների դրպրոցն են ընկնում խորթ տարրեր, կամ ուսման համար

անպետք մարդիկ—լողեր, ծուլեր: Սովորում են նրանք, սովորում են, պետութեանը նրանց համար միջոցներ և ուժեր է ծախսում, իսկ ոգուս՝ չի ստացվում, նույնիսկ վնաս է ստացվում: Պետք է այնպես անել, վոր կուրսերն ուղարկվեն միմիայն ստուգված կուլտուտեսականներ, վորոնք ամբողջովին նվիրված են կուլտուտեսային կարգերին և կոմունիստական կուսակցութեանը, վորոնք հարվածային են, արժանի յեն բարձրարժեք մեքենաների ղեկավար լինելուն:

Կուլտուտեսականներից լավ ո՞վ կարող է իմանալ, թե ո՞վ է ուղարկվել դասընթացներ: Յե՛վ յեթե ուսանողների մեջ անպետք մարդ է մտնում, հարկավոր է ժամանակին խոսել նրա մասին և հետ կանչել տալ նրան: Ընդհանրապես, կուլտուտեսային պատի թերթն իրավունք չունի մի կողմ քաշվելու, յերբ մարդիկ են առաջ քաշվում ուսման ուղարկվելու համար:

Բոլոր տեսակի ուսուցումները կուլտուտեսային արտադրութեանից կտրված բան չեն: Թեյե՛վ, ինչպես ստորեւ կտեսնենք, պատի թերթը պետք է հետաքրքրվի միջ միայն արտադրական հարցերով: Բայց, ընդունենք թե թերթ պատրաստող ընկերներն անհրաժեշտ են համարում առաջին հերթին և գլխավորապես զբաղվել արտադրական հարցերով: Այն ժամանակ նրանք պետք է հասկանան, վոր հասակավոր կուլտուտեսականների ձմեռային ուսուցումը խոշոր չափով արտադրական աշխատանք է: Առանց տրակտորիստներին, կոմբայնավարներին, անասնապահներին սովորեցնելու, առանց գոնե ազրոտեխնիկայի տարրական կանոնները սովորեցնելու, անհնարին է, ինչպես պետք է, կարգավորել սոցիալիստական տնտեսութեանը: Այն բերքը, կաթնատու վութեանը, մատղաշների աճը, վոր այժմ մենք ստանում ենք, միանգամայն անբավարար են:

Կուլտուտեսականները կարող են և պետք է մոտակա տարիներին հասնեն այնպիսի բերքատուութեան, այնպիսի կաթնատուութեան, վորպիսին յերբեք չի տեսել մեր գյուղը: Մենք ցանկանում ենք և պետք է ապրենք իսկական ունեւոր, իսկական հարուստ կյանքով: Դրա

համար մենք բոլոր պայմաններն ունենք: Ունենք մեր խորհրդային հողը, վոր տրվել է կոլտնտեսություններին, առհավետ ոգտադրածման համար, շատ հող, լավ հող, հիանալի հող: Կան մեքենաներ, վոր արտադրվում են մեր խորհրդային գործարաններում: Շատ մեքենաներ, ամեն տեսակի մեքենաներ: Կան կոլտնտեսություններ, այսինքն՝ տնտեսության այնպիսի կազմակերպություն, վորի ժամանակ մարդիկ աշխատում են իրենց համար և վոչ թե կուլակի ու շահագործողների: Կոլտնտեսությունում կարելի չէ անսահմանորեն ավելացնել հողի յեկամուտը:

Վորպեսզի բոլոր կոլտնտեսականներն ունեվոր դառնան, նրանց հարկավոր է միայն աշխատել ազնվորեն և պաշտպանել կոլտնտեսային բարիքը: Ընկ. Ստալինի այս ցուցումը միշտ պետք է հիշել ու կրկնել:

Հարկավոր է աշխատել ազնվորեն ու շնորհքով: Հարկավոր է տիրապետել այն տեխնիկային, վոր տվել է պրոլետարական պետությունը կոլտնտեսականներին: Տեխնիկան, այս բառի լայն հասկացողությամբ այժմ գյուղատնտեսության մեջ ևս վճռում է ամեն ինչ: Սակայն տեխնիկան առանց մարդկանց մեռած բան է: Այժմ գլխավորը մարդիկ են տեխնիկային տիրապետած մարդիկ, խնդիրը լավ պատրաստված կազրերն են: Միայն կոմբայնավարներն ու տրակտորիստները չեն, վոր պիտի տիրապետեն տեխնիկային: Իր գործի տեխնիկային պետք է տիրապետի յուրաքանչյուր կոլտնտեսական, յուրաքանչյուր կոլտնտեսուհի: Մեզ մոտ՝ կապիտալիզմի որոք, և այժմ կապիտալիզմի յերկրներում, գյուղատնտեսությունը մնում է վորպես տնտեսության ամենահետամնաց ճյուղ: Մենք կարող ենք և պետք է մեր գյուղատնտեսությունը բարձրացնենք տեխնիկական բարձր մակարդակի: Այժմ մենք շատ մեքենաներ ունենք. հարկավոր է տիրապետել այդ մեքենաները, տիրապետել ազրոնոմիան, անառնապահական գիտության հիմունքները և կարողանալ կիրառել գիտության տվյալները: Դրա համար հարկավոր է սովորել, սովորել: Յեթե ձմեռը կոլտնտե-

սությունում ուսուցումը թույլ է կազմակերպված, յեթե այն լավ արդյունքներ չի տալիս, նշանակում է հետո աշխատանքն էլ անհրաժեշտ արդյունքներ չի տա: Ելինչպե՞ս, ուրեմն, պատի թերթը կարող է չհետաքրքրվել ձմեռային ուսուցման ընթացքով:

Պատի թերթը հատուկ ուշադրություն պիտի դարձնի աշխատանքի սոցիալիստական արտադրողականության առաջավորների վրա կոլտնտեսային արտադրության ստախանովականների վրա: Այնպիսի մարդկանց փորձը, ինչպիսին է ճակնդեղի դաշտերի ողակավար Մարիա Դեմչենկոն և մյուս բոլոր հինգհարյուրականները, ինչպես կոմբայնավարուհի Ֆեդորա Կալեսովան, տրակտորիստուհի Գրիգորիա Դիմովան և ուրիշ շատ ստախանովականներ, դրանց փորձը լայնորեն պետք է լուսաբանվի պատի թերթի եջերում: Թերթն իր կոլտնտեսության ստախանովականներին պետք է հատուկ ուշադրություն դարձնի, հատուկ պատիվ անի: Գլխավորը պետք է համառ պայքար մղել նրանց դեմ, ովքեր արգելակում են ստախանովականների աշխատանքը: Գլխավորը պետք է ամեն կերպ պայքարել ստախանովականների աշխատանքի համար լավագույն պայմաններն ստեղծելու ուղղությամբ: Գլխավորն այն է, վոր ստախանովականների աշխատանքի մեթոդները կոլտնտեսական լայն մասսաների աշխատանքի մեթոդ դառնան:

Խնդիրը միայն այն չէ, վոր աշխատանքը դաշտում սկսվելուց հետո, շարունակ կրկնեն թե. «պետք է ավելի լավ աշխատել, պետք է ավելի լավ աշխատել»... Այդ ինքնըստինքյան անհրաժեշտ է: Սակայն հարկավոր է նաև դեռ նախորոք մարդիկ նախապատրաստել, վորպեսզի նրանք իրոք կարողանան ավելի լավ աշխատել:

Ահա հենց այդ մասին էլ առանձնապես պետք է գրել թերթում: Պետք է գրել, վոր անհրաժեշտ է սովորել և այն մասին, թե իրոք ինչպես են սովորում, ինչ են սովորել: Յուրաքանչյուր խմբակում ուսուցումը պետք է վորոչակի նպատակ, պարզ խնդիր ունենա:

Յեթե խմբակը, դասընթացը կամ սեմինարն այդպիսի վորոչակի խնդիր չունի, ապա այդպիսի խմբակը կամ դասընթացը բոլորովին պետք էլ չէ:

Այժմ անցնենք ուրիշ հարցերի, վորոնք պետք է հրապարակ հանվեն ձմեռվա ընթացքում: Որինակ, վերցնենք այգիների հարցը, վոր թվում է թե ձմեռվա խնդիր էլ չէ:

ԱՅԳԻՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՏԻ ԹԵՐԹԸ

Հաճախ մեր խոշոր ու մանր տպագիր թերթերում կարելի չէ հանդիպել այսպիսի արտահայտութեան. «Մեր յերկիրը կգառնա մի ծաղկած այգի»:

Այդ ճիշտ արտահայտութեան է և պիտի հասկանալ թե փոխաբերական և թե ուղղակի իմաստով: Մենք կարող ենք և պետք է այնպես անենք, վոր մեզ մոտ ամենուրեք ծաղկած այգիներ լինեն:

Մեր գյուղերում գեռ շատ քիչ պտղատու այգիներ կան: Հին գյուղի աղքատիկ կյանքը, իհարկե, այգիներ գցելու հնարավորութեան չէր տալիս: Այն ժամանակներն, ինչպես ասում են, մարդ մտածում էր միայն շունչ պահելու մասին և վոչ թե լավ ապրելու:

Որհնորային իշխանութեան ժամանակ այգիների տարածութեանն ավելացավ մի քանի անգամ: Սակայն աճող կոլտնտեսային գյուղի համար ձեռք բերած նվաճումները դեռևս քիչ է: Գյուղերում գեռ քիչ այգիներ կան, գեռ այգի գցելու սովորութեանն ու փորձը պակաս է: Դեռ կան տեղեր, վորտեղ այգին չոայրութեան է համարվում: Մինչդեռ այգին շատ ոգտակար, ձեռնտու և անհրաժեշտ ու մատչելի բան է: Յուրաքանչյուր կոլտնտեսութեան կարող է իր համար պտղատու այգի գցել: Դրա համար առանձին խոշոր գումարներ հարկավոր չեն: Այգեգործութեան իմացող կամ այգի վոչ այնքան բարդ գործը սովորել կարողացող մարդ ամեն տեղ էլ կգտնվի, իսկ պահանջված չափով աշխատող ձեռքեր միշտ էլ կոլտնտեսութեանը կարող է հատկացնել այգեգործին: Այդ արդեն

ապացուցված է հազարավոր կոլտնտեսութեաններէ որինակներով, վորոնք արդեն ընդարձակ այգիներ ունեն և նրանցից խոշոր յեկամուտ են ստանում: Բայց միայն կոլտնտեսութեանը չէ, վոր կարող է ու պետք է այգի ունենա: Յուրաքանչյուր կոլտնտեսականն էլ կարող է ունենալ իր փոքրիկ այգին: Այն տնամերձ հողամասը, վոր գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրութեան հիման վրա պետք է ունենա կոլտնտեսականի ընտանիքը, լիովին բավական է և՛ բանջարանոցի, և՛ մի փոքրիկ պարտեզի համար: Տան մոտ 10-20, կամ էլ ավելի պտղատու ծառ տնկելը մի գժվար գործ չէ: Մինչդեռ ողուտն այնքան մեծ է: Չի անցնի 3-4 տարի և այդ ծառերը կոլտնտեսականի ընտանիքին կտան համեղ խնձոր, տանձ, կեռաս և նրա տան բակն էլ կզարգարեն:

Վորքան գորշ ու անհրապույր է հին գյուղը, վորտեղ քիչ այգիներ ու ծառեր կան և վորքան գեղեցիկ ու հրապուրիչ կլինեն նրանք, յերբ կթաղվեն այգիների մեջ: Վոչինչ, բացարձակապես վոչինչ չի խանգարում յուրաքանչյուր կոլտնտեսութեան, յուրաքանչյուր կոլտնտեսականին՝ մոտ ապագայում փարթամ այգիներ գցել:

Կոլտնտեսային թերթը կարող է արդյոք անուշադրութեան մատնել այս կարևոր և վոչ այնքան գրժվարութեամբ լուծելի հարցը: Վո՛չ, չի կարող: Թերթը պետք է լրջորեն ձեռնամուխ լինի այգեգործութեան պրոպագանդին և ոգնի, վոր այդ գործը գլուխ դա: Յեվ հենց հիմա յե, վոք թերթը պիտի ձեռնամուխ լինի այդ գործին, հենց ձմեռը, յերբ դրա մասին մտածելու ժամանակ կա, յերբ ժամանակ կա գարնանը ծառ տնկելու համար ամեն ինչ նախապատրաստելու:

Բայց ինչպե՞ս պետք է թերթը ձեռնամուխ լինի այդ հիանալի գործին: Ամենից առաջ, նայած տեղական պայմաններին, պատի թերթում պետք է գնել պտղատու ծառեր տնկելու հարցը: Յերբ տվյալ գյուղում բոլորովին այգիներ չկան, պետք է գտնել մի

մասնագետ, այգեգործություն խմացող ազրոնոմ, կամ, թեկուզ հարևան գյուղից մի կոլտնտեսական, վորը կարողանա հետաքրքիր ձևով պատմել, թե տվյալ պայմաններում այգեգործությունն ինչպիսի ոգուտներ կարող է տալ:

Մի նախապաշարմունք գոյություն ունի, թե՛ մեր յերկրի բարձր լեռնային շրջաններում այգի գցել չի կարելի: Մինչդեռ իրականությունն այլ բան է ցույց տալիս: Պտղատու ծառերի վորոշ տեսակներ հրաշալի աճում և պտուղ են տալիս նույնիսկ Սևանի ավազանի պես բարձր շրջաններում:

Մեր մեծ գիտնական այգեգործ Միչուրինը, վոր վերջին ժամանակներս վախճանվեց, իր ամբողջ կյանքը նվիրեց պտղատու ծառերի այնպիսի տեսակներ ստեղծելուն, վորոնք կարողանան աճել ԽՍՀՄ-ի շքեղանների մեծ մասում: Պետք է գտնել այնպիսի մարդ, վոր կարողանա պատմել դրա մասին, պատմել, թե, որինակ, տվյալ շրջանում խնձորի ինչ տեսակներ կարելի յե աճեցնել, վորտեղ կարելի յե գտնել այդ ծառերի տնկիները և այլն:

Ի հարկե, այս ամենով պետք է զբաղվի կոլտնտեսության վարչությունը: Նա պետք է այդպիսի ղեկուցում կազմակերպի կոլտնտեսականների ժողովում: Սակայն մենք այժմ խոսում ենք վոչ թե կոլտնտեսության վարչության պարտականությունների մասին, այլ՝ կոլտնտեսային պատի թերթի խնդիրների մասին: Թերթը պետք է խթանի այս հարցի լուծումը, հետաքրքրի բոլոր կոլտնտեսականներին:

Իայց ահա, հարցը դրվել է. տեղի յե ունեցել զրույց կամ ղեկուցում: Հետո ի՞նչ պիտի անել: Հետո պիտի գրել այն մասին, թե կոլտնտեսությունն ինչպես է նախապատրաստվում պտղատու ծառեր տնկելուն: Յեթե վատ է նախապատրաստվում, պետք է քննադատել այդ գործում կոնկրետ մեղավորներին: Պետք է տեղավորել առանձին կոլտնտեսականների թղթակցություններ, վորոնցով նրանք կպատմեն, թե ինչպես են իրենք պատրաստվում ծառեր տնկելու և

վորտեղ պիտի տնկիներ գնեն: Լավ կլինի պատի թերթում մրցություն սկսել կոլտնտեսականների միջև, թե ով ամենից շուտ և ամենից լավ կտնկի ծառեր, ով ամենից լավ այգի կաճեցնի: Իսկ հետո՝ գրել, թե ով, ինչպես է աճեցնում իր տնկած ծառերը:

Իսկ յեթե տվյալ դրուղում այգին սովորական բան է և արդեն շատերն ունեն, պետք է հարց բարձրացնել, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա իր այգին և վոչ թե նրանց մի մասը միայն, պետք է խնդիր դնել կոլտնտեսության այգին ընդարձակելու և բարելավելու մասին: Կարելի յե թղթակցություն տեղավորել որինակ՝ այսպիսի վերնագրով. «Ինչու վարդան Ոհանյանն այգի չունի», կամ թե՛ այս վերնագրով. «Պողոս Չոբանյանն իր այգուց 6 ցենտներ խնձոր է ստացել», և այդ մասին մասնրամասն պատմել:

Գյուղթղթակցիները, թերթի շուրջը համար խորմված ակտիվն որինակ պիտի հանդիսանա և ինքն առաջինը պիտի ձեռնամուխ լինի իր տնամերձ հողամասում այգի գցելուն: Լավ կլինի այդ գործի մեջ քաշել կոլտնտեսուհիներին: Թող նրանք այգի գցելու ոգտին խոսեն և վոչ միայն խոսեն, այլ և գործի անցնեն: Նշանակում է՝ գործը միայն պետք է վորքի հանել, իսկ դրանից հետո աշխատանքը ծախայելը դժվար չէ: Յեվ վորպիսի պատիվ կլինի թերթի համար, յեթե նա այդպիսի մի հիանալի գործի նախաձեռնողն ու կազմակերպիչը դառնա:

Մեզ վոչ թե պարզապես այգիներն են հարկավոր, այլ հարկավոր են լավ, արժեքավոր՝ պտուղ տվող այգիներ: Նշանակում է պետք է կամպանիա սկսել ծառերի բարելավման, նրանց տեսակն ազնվացնելու ուղղությամբ: Պետք է թղթակցիների շարքերի մեջ քաշել հին, փորձված այգեգործներին, վորոնք կդրեն, թե ինչպես պիտի բարձրացնել այգիների վորակը, իրենք ինչպես են անում այդ գործը:

Չպետք է վախենալ, թե այդով զբաղվելը կոլտնտեսականին կկտրի կոլտնտեսության հիմնական

աշխատանքից: Տնամերձ հողամասում զցած փոքրիկ պարտեզը կոլտնտեսականից շատ աշխատանք չի պահանջի: Մանավանդ, վոր այդ աշխատանքը հեշտությամբ կարող են կատարել ծերերն ու հաշմանդամները:

Արտասահմանում յեղած ընկերները պատմում են, թե այնտեղ վորոշ տեղեր բոլոր ճանապարհների յեզերքին պտղատու ծառեր են տնկված: Այդ ծառերն առանձին խնամք չեն պահանջում, բայց ամեն տարի պտուղ են տալիս: Բայց ինչո՞ւ հեռուն գնալ: Հենց մեր Կարբաղինո-Բալկարյան հանրապետությունում շատ ճանապարհների յեզրերին տասնյակ կիլոմետրերով պտղատու ծառեր են տնկած— խնձորենիներ ու տանձենիներ: Յերկու-յերեք տարուց հետո այդ ծառերի վրա կերևան հյութալի ու համեղ պտուղներ— թող ուտի ով ուզում է: Յե՛վ յեթե այդպես է ճանապարհների յեզրերին, ապա միթե՞ չի կարելի նույնպիսի տանձենիներ ու խնձորենիներ աճեցնել հենց տնամերձ հողամասում, կամ թե կոլտնտեսության հողերում: Ի հարկե կարելի յե:

Ահա Վրաստանում, Աջարստանում. կոմունիստները լողունդ են ընդունել— յուրաքանչյուր կոլտնտեսական ընտանիք հինգ հատ մանդարինի ու կիտրոնի ծառ պիտի ունենա: Յե՛վ այդ լողունդը հաջողությամբ իրականացվում է: Ի հարկե, բարձր լեռնային շրջաններում բացոթյա կիտրոնի ծառ աճեցնել չի կարելի, բայց տանձենի և խնձորենի հո կարելի յե. և դրանից պակաս բերք չի ստացվի:

Ուրեմն՝ գործի անցեք՝, ընկեր խմբադիրներ: կոլտնտեսականների մեջ հետաքրքրություն առաջացրեք դեպի այգին, ոգնեցեք նրանց այգիներ զցել:

ՄԵՂՐԻ ՄԱՍԻՆ

Այգիների հետ կապ ունի և մի ուրիշ խնդիր, վոր կանգնած է կոլտնտեսությունների առաջ, մի խնդիր, վոր նույնպես պիտի հետաքրքրի պատի թերթերին: Մեր խոսքը վերաբերվում է մեղրարուծությանը:

Այդ խնդիրն այգիների հետ կապված է նրա համար, վոր, ինչպես հայտնի յե, մեղուները նպաստում են պտղատու ծառերի բեղմնավորմանը, յերբ նրանք ծաղկած են լինում: Մեղուները կարող են շատ բարձրացնել պտուղների բերքը և, ընդհակառակն, առանց մեղուների ոգնության նույնիսկ լավ այգին կարող է քիչ բերք տալ: Ի միջի այլոց ասենք, վոր մեղուները հարկավոր են վոչ միայն այգիների համար, այլև խոտացանության, սոռձին հերթին առվույտի համար:

Առաջիկա տարիներին մենք պետք է զգալի չափով ընդարձակենք առվույտի ցանքերի տարածությունը: Այդ անհրաժեշտ է ինչպես հացաբույսերի, այնպես ել տեխնիկական կուլտուրաների, որինակ՝ բամբակի բերքատուությունը բարձրացնելու համար: Այդ հարկավոր է նաև անասնապահությանը: Առանց խոտացանության կուլտուրական, բարձր արտադրողական անասնապահությունն անհնարին է: Առվույտի ցանքը մեզ մոտ ընդարձակվելու յե: Բայց առվույտից իսկական բերք ստանալու համար մեղուներ են հարկավոր: Յե՛վ զուր չե, վոր կոլտնտեսային նոր կանոնադրության մեջ հատկապես խոսվում է մեղվարուծության մասին և յուրաքանչյուր կոլտնտեսական ընտանիքին թույլատրված է ունենալ իր մեղվանոցը մինչև 20 փեթակ:

Սակայն այս ամենը, այսպես ասած՝ մեղվարուծության կողմնակի, լրացուցիչ ոգուտներն են: Հիմնականը մեղրն է:

Մեր խոշոր գյուղատնտեսության յերկրում մենք հենց այժմ ել կարող ենք տասն անգամ ավելի մեղր ստանալ, քան ներկայումս ստանում ենք:

Մեղվանոցը տնտեսության մեջ շատ յեկամտարեքան է: Նա մեծ ծախսեր չի պահանջում, նրա սպասարկման համար շատ մարդիկ չեն հարկավոր, իսկ յեկամուտ՝ տալիս է կանոնավոր և այն ել վոչ փոքր յեկամուտ: Որինակ՝ 100 փեթակից բազկացած մեղվանոցը կարող են սպասարկել 2—3 հոգի, այն ել հա-

ճախ ծերունիներ, վորոնք ծանր աշխատանք կատարել
չեն կարող: Իսկ գիտե՞ք թե այդպիսի մեղվանոցը տա-
րեկան վորքան մեղր կարող է տալ:

Առնվազն յերկու հարյուր փութ: Կան մեղվանոց-
ներ, վորտեղ յուրաքանչյուր փեթակ մեղուն տարե-
կան 4—5 փութ մեղր է տալիս, չհաշված մոմը, մեղվի
ձագերը, վորոնք կարելի չէ վաճառել, կամ ընդարձա-
կել մեղվանոցը:

Մենք տեսել ենք կոլտնտեսություններ, վորոնք
1500 փեթակ մեղու ունեն: Որինակ՝ Կիևի մարզում
Չապակի անվան կոլտնտեսությունը: Այնտեղ կոլ-
տնտեսականները թեյը մեղրով են խմում և իրենց
գրամական յեկամուտներն էլ ավելացնում են:

Իսկ ի՞նչն է խանգարում յուրաքանչյուր կոլտն-
տեսությանն ունենալ իր մեղվանոցը, յեթե վոչ այդ-
քան խոշոր, գոնե 100—200 փեթակով: Վոչինչ չի խան-
գարում: Յեթե այդպիսի մեղվանոցից յուրաքանչյուր
աշխուրին գեթ 25 գրամ մեղր ընկնի, ելի 500 աշխու-
րանեցող ընտանիքը 12 կիլոյից ավելի մեղր կստանա,
իսկ յեթե աշխուրին 50 գրամ ընկնի, 25 կիլո մեղր
կստանա:

Բայց այդ միայն կոլտնտեսության մեղվանոցից:
Իսկ յուրաքանչյուր կոլտնտեսական կարող է ունենալ
իր մեղվանոցը՝ 5—10 և նույնիսկ 20 փեթակ մեղույով:
Այդ դեպքում, մի տեսք, թե յուրաքանչյուր ընտա-
նիքն ինչքան մեղր կունենա: Ինչքա՞ն մեղր կլինի
մեր յերկրում:

Յեվ գլխավորն այն է, վոր այդ ամենը շատ մատ-
չելի գործ է: Յեթե մինչև այժմ մեզ մոտ մեղվարու-
ծությունը շատ չի զարգացել, ապա այդ միայն այն
պատճառով, վոր ինչպես հարկն է՝ ձեռնամուխ չենք
յեղել այդ գործին: Ժամանակը չե՞ արդյոք, վոր կոլ-
տնտեսականները յրջորեն ձեռնամուխ լինեն մեղվա-
բուծությանը: Ժամանակն է, վաղուց ժամանակն
է: Հենց կոլտնտեսային գյուղն է, վոր անսահման հնա-
րավորություններ ունի ամեն տեսակի բարիքներից
պատվելու, կուլտուրական տնտեսություն ստեղծելու:

և բազմապիսի բարիքներ ստանալու: Յեվ միթե կոլ-
տնտեսային ու բրիգադային պատի թերթերի համար
պատվավոր պարտականություն չէ մեղվարուծության
նախաձեռնողը, պրոպագանդիստն ու կազմակերպիչը
լինել:

Այն, ինչ վոր վերն ասվեց այդեզործության մա-
սին—ինչպես սկսել այդ գործը— այդ ամենը մեծ չա-
փով վերաբերում է նաև մեղվարուծությանը: Այս-
տեղ ևս գործը պիտի սկսել հարցը դնելուց, գործին
տեղյակ մարդկանց ներգրավել, ողնել գործն սկսե-
լուն:

Մեղուներն այն հատկությունն ունեն, վոր լավ
խնամքի դեպքում բազմանում են շատ արագ: Բավա-
կան է մի քանի փեթակ ձեռք բերել և մի քանի տա-
րուց հետո արդեն մի մեծ մեղվանոց կստեղծվի: Բայց
վորտե՞ղ դանել առաջին փեթակները: Հարևանների
մոտ, մերձակա, կամ հեռավոր հարևանների մոտ:
Յեվ հենց ձմեռն է վոր պետք է նախապատրաստվել,
գնալ այն շրջանը, վորտեղ կարելի չէ մեղու գնել,
խոսել, համաձայնության գալ և վաղ գարնանը փո-
խադրել: Գուցե կոլտնտեսության համար այդ ավելի
հեշտ է անել, քան առանձին կոլտնտեսականի և ան-
պայման հեշտ է: Ուրեմն՝ թող գործը կոլտնտեսու-
թյունն սկսի, իսկ յերբ կոլտնտեսության մեղվանո-
ցը կմեծանա, նա կարող է փեթակներ տալ առանձին
կոլտնտեսականներին, ինչպես որինակ՝ կոլտնտեսա-
կաններին գոճիներ կամ վառյակներ է տալիս բազ-
մացնելու: Կարևորն սկսելն է, բայց ամենևին էլ
պարտագիր չէ, վոր սպասեն, մինչև կոլտնտեսության
փեթակները բազմանան: Յուրաքանչյուր կոլտնտեսա-
կան կարող է իր համար գնել մի գույզ փեթակ: Յեթե
ցանկություն լինի, գնելու տեղն էլ կհարվի:

Ահա հենց այստեղ է, վոր առաջ է գալիս պատի
թերթի դերը: Նա պետք է հետաքրքրություն ստեղ-
ծի դեպի մեղվարուծությունը: Նա պետք է մեղու-
ների մասին այնպիսի պրոպագանդ ծավալի, վոր բն-
թերցողը կարգալիս մեղրի համն զգա իր բերանում:

հասկանա, թե վորքան քաղցր բան է մեղրը: Հին մեղր վարույժները, անցյալում մեղու ունեցած մարդկանց, մասնագետ մեղվարույժների պատմածները թերթում տեղավորելը մեծ ոգուտ կարող է տալ գործին:

Կարելի չէ նաև գրագրություն ունենալ այնպիսի պատի թերթի խմբագրի, կամ այնպիսի շրջանի հետ, վորտեղ արդեն մեղվաճանցներ կան: Նա կարող է մի փոքր հոգվածով պատմել, թե իրենց մոտ մեղվաճանցը վորքան ոգուտ է տալիս:

Սակայն դեպի մեղվարուծությունը հետաքրքրություն առաջացնելը գործի կեսն է միայն: Գլխավորն այն է, վոր իրականում սկսվի մեղվարուծությունը: Այստեղ արդեն պատի թերթը պետք է ոգնի և՛ խորհուրդներով, և՛ քննադատությամբ և սոցմրցման կադմակերպումով: Մեղվարուծության մասին գրքույկ գտնելը դժվար բան չի: Պետք է կոլտնտեսականներին խորհուրդ տալ՝ կարգալ այդ գրքույկը և ասել, թե վորտեղ կարելի չէ գտնել այն:

Այժմ ընդունենք, թե կոլտնտեսական վարդան Արամյանը մեղուններ է ձեռք բերել և մեղվաճանց սարքել: Հարկավոր է Արամյանին որինակ դարձնել, թերթում տեղավորել նրա հետ ունեցած գրույցը, գովել նրան, վորպես առաջին մեղվարույժի, յեթե նա հարվածային է և կոլտնտեսությունում լավ է աշխատում:

Յեթե առաջին անգամ կոլտնտեսությունն է փութակներ ձեռք բերել և մեղվաճանց սարքել, պետք է հսկողություն սահմանել, թե այդ գործն ինչպես է կազմակերպված և ժամանակ առ ժամանակ պետք է լուսաբանել թերթում գործի ընթացքը, վորպեսզի մարդիկ շարունակեն հետաքրքրվել նրանով:

ԶԿԱՆ, ԳԴԱԼԻ ՅԵՎ ԱՅԼ ԲԱՆԵՐԻ ՄՍԱԻՆ

Մենք արդեն թվեցինք շատ խնդիրներ, վորոնք ձմեռվա շրջանում կանգնած են կոլտնտեսային պատի թերթերի առաջ: Բայց չե վոր եյապես մենք միայն կոլտնտեսային կյանքի միջանի հարցերը չոչափեցինք:

Կարելի չէր ելի ուրիշ շատ հարցեր քննել, ինչպես որինակ՝ ձկնորսությունը: Միթե՞ շատ ու շատ կոլտնտեսություններ չեն կարող իրենց համար լճակներ պատրաստել և այնտեղ ձկնորսությամբ զբաղվել: Ինչու անցյալում կալվածատերերն ու խոշոր կուլակները կարողանում էին այդ անել, իսկ մեր կոլտնտեսությունները չեն կարող:

Յեվ իրոք, կոլտնտեսությունները կարող են ավելի լավ լճակներ պատրաստել, քան կալվածատերերը և արդեն կան կոլտնտեսություններ, վորոնք իրենց սեփական ուժերով լճակներ են պատրաստել և մանր ձուկ են բաց թողել նրա մեջ ու հիմա կսկսեն հիանալի ձուկ վորսալ:

Կարելի չէր խոսել նաև զանազան առարկաների արտադրության մասին, ինչպես որինակ՝ գզալներ, խաղալիքներ, գորգեր, կահկարասի, պարան և այլն, վորոնցով ձմեռվա ընթացքում կարող են զբաղվել կոլտնտեսությունները:

Կարելի չէր խոսել նաև շինարարության մասին, վոր պետք է նախապատրաստել ձմեռվա ընթացքում, իսկ մասամբ ել հենց ձմեռը կատարել. շինանյութերի պատրաստումը, ճշգրիտ պլաններ ու նախագծեր մշակելը, շենքերի տեղն ընտրելը և այլն:

Կարելի չէր խոսել խրճիթ-լարորատորիաների և այլ բազմաթիվ հարցերի մասին, վորոնք առաջանում են ձմեռը, հարցեր, վորոնցով պետք է հետաքրքրվի ու զբաղվի կոլտնտեսային պատի թերթը:

Կարող են հարցնել. չափից դուրս շատ խնդիրներ չե՞նք դնում մենք պատի թերթերի վրա: Պատի թերթի ուժերը կպատե՞ն արդյոք կատարելու այս բոլոր գործերը, վոր մենք թվեցինք այստեղ:

ՎՈՐՏԵՂԻՅ ՊԻՏԻ ՈՒԺԵՐ ՎԵՐՑՆԻ ԿՈՒՏՆՏԵՍԱՅԻՆ ԹԵՐԹԸ

Ամենից առաջ, պարզ ասենք. մենք գիտենք, վոր շատ կոլտնտեսային թերթեր դեռ շատ թույլ են, վոր մեր թված բոլոր խնդիրների լուսաբանման համար

հարկավոր է շատ և լավ աշխատել և, վերջապես, մենք գիտենք, վոր վոչ բոլոր թերթերն անպայմանորեն կողտագործեն մեր աված բուրջ խորհուրդները:

Մինչև այժմ մենք շատ դանդաղներ ենք լսել այն մասին, թե թեմաներ չկան, թե՛ մարդիկ չգիտեն, ինչի մասին գրեն: Դրա համար էլ աշխատեցինք ցույց տալ, թե յուրաքանչյուր կոլտնտեսային պատի թերթի առաջ վորքան շատ հարցեր կան դրված: Վնաս չունի, յեթե թեմաները շատ են: Այդ չի խանգարի: Թող յուրաքանչյուր պատի թերթ չափի իր ուժերն ու հնարավորութունները և մեր նշած հարցերից բուսաբանի այն, վորի համար նրա ուժը կպատի:

Սակայն մի բան չպիտի մոռանալ: Թերթը միևնույն տեղում կանգնած չպետք է մնա: Թերթի ուժերը պետք է աճեն: Վո՞րտեղից վերցնել այդ ուժերը: Մասսայից, գյուղթղթակիցների թիվն ավելացնելով, թերթի շուրջն ակտիվ համախմբելով, վերջապես կոլտնտեսութան անդամներին թերթի հետ կապելով: Այժմ կոլտնտեսութունում բավականաչափ գրագետ և նույնիսկ կրթված մարդիկ կան, կան այնպիսի մարդիկ, վորոնց վրա կորելի յե հենվել, վորոնցից կարելի յե ուժեր ներգրավել: Իլյուավորն այն է, վոր թերթը չթմրի, այլ գործի, կայունութուն, համառութուն հանդես բերի և չվախենա դժվարութուններից:

Ժամանակն է հասնելու այն դրության, վոր յուրաքանչյուր կոլտնտեսութուն ունենա իր լավ թերթը, վորն իրոք հանդիսանա կոլտնտեսականների հասարակական կարծիքի արտահայտիչն ու կազմակերպիչը, վորն իրոք լինի ամենագորեղ ու ամենասուր դենքը կուսակցական կազմակերպութան աշխատանքներում, կոլտնտեսութան լավագույն, առաջավոր մարդկանց աշխատանքներում:

Ահա, յեթե մենք նկատի ունենանք այդպիսի թերթ, ապա բոլոր մեր թված հարցերը դժվար չեն թվա: Ընդհակառակն, մենք ցանկանում ենք այդպիսի թերթերի առաջ, վորոնց պետք է հավասարյեն և մյուս բոլոր թերթերը, էլի մի նոր, ավելի ընդհանուր խնդիր դնել:

Մեր պատի թերթերից շատերի լուրջ թերութուններից մեկն այն է, վոր նրանք կտրված են կոլտնտեսութան ընթացիկ կյանքից: Նույնիսկ կանոնավոր ու պարբերաբար լույս տեսնող թերթն էլ քիչ է պատահում, վոր հեռելի, թե ինչ է կատարվում կոլտնտեսութունում: Ասենք թե թերթը գրում է հարվածայինների մասին, պայքարում է լողբության դեմ: Այդ լավ է: Սակայն, բացի մեկ-յերկու հարցից, վորոնցով թերթը ավյալ մոմենտին զբաղված է, ուրիշ բանով չի զբաղվում և այն, ինչ տեղի յե ունենում կոլտնտեսութունում, կարծես թե իրեն չի վերաբերում: Կարող է պատահել, վոր այդ ժամանակ կոլտնտեսութունում վորևե մեկի հարսանիքն է տեղի ունենում, կամ մի նոր մեքենա յեն դնել, կամ հրդեհ է պատահել: Այդ բոլորի մասին կոլտնտեսութունում շատ խոսակցութուններ ու սխալ բացատրութուններ են տրվում այդ հարցերը հետաքրքրում են բոլորին, իսկ թերթը՝ լսել է, կարծես անտեղյակ է այդ բոլորից:

Ոմբազիրների մեջ այն կարծիքն է ստեղծվել, թե թերթը չպետք է լուսարանի կոլտնտեսութան և կոլտնտեսականների ամբողջ կյանքը, այլ պիտի զբաղվի միմիայն վորոշակի, զուտ արտադրական հարցերով: Յեվ այն էլ վոչ բոլոր արտադրական հարցերով, այլ միայն ամենագլխավորներով:

Ճիշտ է արդյոք այդ կարծիքը: Վո՞չ, քիչտ չե՛: Ի հարկե, յեթե թերթի ուժը չի պատում, յեթե նա դեռ թույլ է, ապա նա պետք է առաջին հերթին լուսարանի արտադրական հարցերը, այն էլ ամենագլխավորները: Սակայն այդքանով չպիտի բավականանալ:

Պատի թերթն ըստ հնարավորին պետք է լուսարանի կոլտնտեսութան աշխատանքի, կյանքի, կենցաղի ու կուլտուրայի բոլոր հարցերը: Թերթը պետք է իր ընթերցողների հասարակական կարծիքը կազմակերպի բոլոր կարևոր հարցերի շուրջը: Այն ժամանակ և ընթերցողներն ավելի շատ կլինեն և թերթն ավելի լավ կկարողանա կատարել իր պարտականութունները:

Ընդունենք այսպիսի մի դրութուն. դեռ չլախախտ

ժած կուլակը հրդեհել և կոլտնտեսութեան դոմը: Այդ մասին, իհարկե, թերթը պետք է շատ գրի և մանրամասն: Այդպիսի դեպքում թերթը պետք է ոգնի՝ մոբիլիզացիայի յենթարկել կոլտնտեսականների զգոնութեանը, ընդհանուր ատելութեան հրահրի դեպի թշնամին: Սակայն սա շատ պարզ դեպք է և հավանորեն ամեն մի պատի թերթ գրա մասին կգրի: Սակայն պատահում է նաև, վոր կուլակն այդքան պարզ չի գործում: Նա բամբասանքներ է տարածում, դեպքերը բացատրում է իրեն համար ձեռնտու ձևով՝ ոգովելով վորոշ կոլտնտեսականների հետամնացութեանից: Այդ բանը նա անում է կոլտնտեսութեանում պատահած նույնիսկ մանր դեպքերի առթիվ:

Դրա համար ել շատ կարևոր է, վոր թերթն այդ դեպքերին տա իր ճիշտ լուսարանումը: Այլ կերպ ասած՝ պատի թերթը պետք է գրի ամեն բանի մասին, ինչ տեղի յե ունենում կոլտնտեսութեանում, պետք է ինֆորմացիա տա:

Որինակ՝ զայլը հոշոտել է կոլտնտեսական Ստեփանյանի վոչխարը: Այս կարծես թե մեծ դեպք չի: Յեվ գյուղում առանց թերթի ել կարող են բոլորն իմանալ այդ դեպքը: Բայց և այնպես, ավելորդ չի լինի այդ դեպքի մասին մի փոքրիկ բան գրել թերթում: Կարելի յե նույնիսկ հոգվածի վերջում հարց բարձրացնել զայլերի դեմ պայքար սկսելու մասին:

Մի ուրիշ որինակ: Կոլտնտեսուհի Մարթա Վարդանյանը փոխառութեան տոմսով մի գումար է շահել: Դրա մասին կիմանա՞ն գյուղում: Իհարկե, կիմանան: Սակայն գրա մասին պետք է գրել թերթում: Այդ կապակցութեամբ կարելի յե գրել նաև, թե փոխառութեան պարտատոմս ձեռք բերելը վորքան ոգուտ է:

Յերրորդ որինակը: Մի վորե է հետամնաց կոլտնտեսական ծեծեց իր կնոջը: Հարկավոր է այդ մասին գրել թերթում: Անպայման հարկավոր է: Պետք է գրել և բոլոր յեզրակացութեաններն անել այդ վրդովեցուցիչ փաստի մասին:

Չորրորդ որինակը: Կոլտնտեսութեանը յերկու ցեղա-

կան ցուլ է ձեռք բերել: Հասկանալի յե, վոր այդ մասին բոլորը կիմանան: Իսկ թերթն իր հերթին պետք է գրի այդ մասին և բացատրի, թե վորտեղ են գնվել ցուլերը, ինչ գումարով և ինչու անհրաժեշտ եր գնել:

Այսպիսի որինակներ շատ կարելի յե բերել: Սակայն չի կարելի ամեն ինչ նախատեսել, թե կոլտնտեսութեանում ինչ նորութեաններ տեղի կունենան մի ամիս հետո: Ինքը թերթը պիտի հետևի այդ նորութեաններին, վոր պեսզի յուրաքանչյուրը ցանկանա մոտենալ թերթին և իմանալ, թե ինչ նորութեան կա իրենց կոլտնտեսութեանում: Վատ չի լինի, որինակ այսպիսի վերնագիր ունենալ «Կոլտնտեսութեան նորութեանները» կամ՝ «Նորութեաններ մեզ մոտ» և այդ վերնագրի տակ տեղավորել կոլտնտեսութեան կյանքում յեղած նորութեանները:

Ճիշտ չէ այն կարծիքը, թե թերթը պետք է գրի մի միայն քննադատող թղթակցութեաններ, կամ՝ միայն խոշոր հաղթանակների մասին: Կան և այնպիսի բաներ, վորոնք կարծես թե մի առանձին նվաճում չեն և քննադատելու բան ել չեն:

Որինակ՝ կոլտնտեսութեան վարչութեանը նիստ գումարեց, վորոշումներ ընդունեց: Բոլոր կոլտնտեսականներն այդ նիստին չեն կարող ներկա լինել: Բայց մի թե՞ նրանց համար հետաքրքիր չի, իմանալ, թե ինչ հարցեր են դրվել վարչութեան նիստին, ինչ վորոշումներ են ընդունվել: Չե՞ վոր այդ ամենը մեծ չափով կոլտնտեսականներին է վերաբերում: Բայց ինչպես կարելի յե կոլտնտեսականներին տեղյակ պահել վարչութեան վորոշումներին: Այդ կարելի յե անել թերթի միջոցով:

Թերթում տված այդպիսի տեղեկութեանը վոչ միայն կոլտնտեսականներին հնարավորութեան կտա իմանալ, թե ինչ է անում վարչութեանը, այլև մեծ ծառայութեան կմատուցի կոլտնտեսութեանը: Այդ կոլտնտեսականներին կհամախմբի վարչութեան շուրջը և նրանց կվարժեցնի հետաքրքրվել կոլտնտեսութեան բոլոր գործերով:

Նույն չափով այդ վերաբերում է նաև կոլտնտեսութեան կուսակցական ու կոմյերիտական կազմակերպու-

Թյուններին: Իհարկե, կուսակցական ու կոմյերիտական հարցերում թերթը միայն ինֆորմացիաներով չպիտի սահմանափակվի: Հարկավոր է տեղավորել նաև թղթակցություններ ու հոդվածներ:

Այստեղ մենք չենք նշի, թե հատկապես կոմյերիտական կազմակերպության աշխատանքի վոր հարցերի մասին պիտի գրի թերթը: Այդ մեր դասախոսության նյութի մեջ չի մտնում: Մենք խոսում ենք միայն այն հարցերի մասին, ինչով վոր պիտի զբաղվի պատի թերթը ձմեռվա ընթացքում: Թերթը պարտավոր է տեղեկություններ տալ այն մասին, թե կոլտնտեսությունում ինչ են անում կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները: Այդ բանում շահագրգռված են նախ և առաջ այդ կազմակերպությունները: Կոլտնտեսականները պետք է տեղյակ լինեն նրանց աշխատանքներին:

Ընդհանրապես նյութի քարտուքյունը թերթի համար մեծ նշանակություն ունի: Հնացած նյութն զգալի չափով կորցնում է իր ուժը, կորցնում է նաև հետաքրքրությունը: Ամենից շատ թերթն է, վոր պիտի իմանա ու միշտ հիշի հետևյալ առածը «զգալը թանգ է ճաշի ժամանակ»: Բայց յեթե այդ վերաբերում է թերթում տեղավորված բոլոր նյութերին, ապա ել ավելի լավ պիտի հիշել այդ բանը զանազան նորությունների մասին տեղեկություններ տեղավորելիս: Դրանք պիտի լինեն թարմ, չհնացած տեղեկություններ:

ՅԵՐԲ ՊԻՏԻ ԼՈՒՅՍ ՏԵՍՆԻ ԹԵՐԹԸ

Այս կապակցությամբ առաջանում է հետևյալ հարցը. վո՞րքան հաճախ պիտի թերթը լույս տեսնի ձմեռվա ընթացքում:

Միանգամայն պարզ է, վոր թերթի մի համարից մինչև մյուս համարն ինչքան ժամանակ էլ վոր անցնի, միևնույն է, ինֆորմացիա պետք է տեղավորվի: Ճիշտ է, յեթե թերթն ուշ-ուշ լույս տեսնի, դեպքերի մի մասը հնացած կլինեն նրա համար: Բայց և այնպես, թարմ

դեպքեր ել բավական կլինեն թերթի հերթական համարում տեղավորելու համար:

Իհարկե, ամենից լավն այն է, վոր թերթը հաճախակի լույս տեսնի: Դրա համար ավելի շատ ուժեր, ակտիվիստներ ու գյուղթղթակիցներ են հարկավոր: Յեթե ուժերը պակաս են, ավելի լավ է անիրազործելի խնդիրներ չվերցնել իր վրա: Ավելի լավ է մի քիչ ուշ-ուշ լույս տեսնի, միայն կանոնավոր, և վոր թերթի յուրաքանչյուր համարը հետաքրքիր ու բովանդակալից լինի:

Վորոչ կոլտնտեսություններում ամառն ու զարնանը պատի թերթը լույս է տեսնում ամեն օր: Այդ թերթերի խմբագիրներն ու նրանց ղեկավար կուսակցական կազմակերպությունները ճիշտ են մտածել, թե՛ ավելի լավ է թերթը փոքր լինի, միայն թե շուտ-շուտ լույս տեսնի:

Հազիվ թե ձմեռն անհրաժեշտ լինի այդպես վարվել: Ձմեռը չկան այնպիսի խիստ շտապողական աշխատանքներ, ինչպես որինակ հունձն է: Դրա համար ել կարիք չկա թերթը շուտ-շուտ լույս ընծայելու հետևից ընկնել դրա հաշվին վատացնելով վորակն ու յուրաքանչյուր համարի բովանդակությունը:

Ի հարկե, յեթե այնքան ուժեր կան, վոր կարելի յե ամենօրյա թերթ լույս ընծայել, ծիծաղելի կլինեն այդ ուժերը չողտազործելը: Իսկ մեծ մասամբ, միանգամայն բավական կլինի թերթը շաբաթական յերկու անգամ լույս ընծայելը: Յեթե վորոչ խմբագիրների այդ չի հաջողվի անել, այդ դեպքում կարելի յե թերթը լույս ընծայել 5 օրը մեկ անգամ, կամ, ծայրահեղ դեպքում՝ շաբաթը մեկ:

Սակայն բոլոր դեպքերում ել մի բան պետք է լավ հիշել. քերթը պետք է լույս տեսնի կանոնավոր և վորոչալի ժամանակամիջոցից հետո: Որինակ՝ յեթե թերթը շաբաթական յերկու անգամ է լույս տեսնում, ուրեմն կալոնավոր կերպով պետք է լույս տեսնի չորեքշաբթի և կիրակի օրերը, կամ ուրիշ օրեր, միայն թե՛ անպայման նույն օրերը, վորպեսզի կոլտնտեսականներն իմանան այդ օրերը և այդ օրերին սպասեն թերթի լույս տեսնելուն:

Մենք սրանով դասախոսութիւնը վերջացնում ենք: Կարող ե պատահել, վոր մենք մեր ընթերցողի բոլոր հարցերը չենք բավարարել, կարող ե պատահել նաև, վոր ամեն ինչ պարզ չե, կամ մենք հաշվի չենք առել կոլտնտեսային պատի թերթի ձմեռային աշխատանքի բոլոր պայմանները:

Այդ դեպքում մեր ընթերցողներին խնդրում ենք ուղարկել մեզ իրենց հարցերը կամ դիտողութիւնները: Հարցերին անմիջապէս կպատասխանենք, իսկ դիտողութիւնները հաշվի կառնենք հետևյալ դասախոսութիւններում:

ՄՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ պատի թերթը պետք ե լույս տեսնի կանոնավոր:
2. Վորո՞նք են թերթի անկանոն լույս տեսնելու բացասական կողմերը:
3. Կոլտնտեսային գյուղի ձմեռն ինչով ե տարբեր վում հին գյուղի ձմեռից:
4. Ինչո՞ւ կոլտնտեսութիւնն ամբողջ տարին թերթ ունենալու կարիք ե զգում:
5. Պատի թերթն ինչպե՞ս պետք ե լուսարանի անասնապահական ֆերմայի ձմեռային աշխատանքը:
6. Պատի թերթն ինչպէս պիտի պայքարի ֆերմայի աշխատանքների մեքենայացման համար:
7. Ի՞նչ ե նշանակում կազմակերպել պատի թերթի հատուկ համար՝ նվիրված անասնապահութեանը:
8. Պատի թերթը ձմեռվա ընթացքում ինչպէս պետք ե կազմակերպի դարնանացանի նախապատրաստութիւնը:
9. Վորո՞նք են պատի թերթի պարտականութիւնները կոլտնտեսութեան ձմեռային ուսուցման բնագավառում:
10. Թերթն ինչպե՞ս կարող ե նպաստել կոլտնտեսականների ուսման գործին:
11. Կոլտնտեսութեան պատի թերթը ձմեռվա ընթացքում ինչի՞ց պիտի սկսի ալգեգործութեան պրոպագանդը և ինչպէս առաջ մղի այն:
12. Ինչո՞ւ պետք ե անմիջապէս ձեռնամուխ լինել մեղմարուծութեան դարգացմանը:
13. Կոլտնտեսութիւնում մեղմարուծութիւնը դար-

ևնոքըմ տիբոմտոն զվճարի յրադրաբխոգատուանի Լգնզո
-րս ոչի վնգս մսի Կնկոնան վմգժնոցն ծղեցրեանի Կվսոտր
վմգժնոցն կվնոքըմ րս վմգժմսն զտոբխոգատուանի Լգմսի
-տնգս տվնաքմսճոյ յրաքմզք մզք գ աղգրոմչոտ րսնչվ
զք ծղեցնամբս իտ վլգիտ վնոցնմսի Կտգչրսոն

: Երաքմզք Լգմսիտն
-գս վկոնեռս վոյվ վլգմտի մսի Կժգմն իտ զտժոնտ զճաի
-եռչ նևտ ծրան մսի Կտոզ Լգչտատոն գ նամտի նևոյ

: Լգմզք ծնչք ջմսի Կ Լգոտ զրաբխոգատուի տոն գ
ժտգիտ մտրոչ րսնչմն նոմոտ Կ իտն : վոյվի զրաբխոգատուի
մտրոչ նգք տն նմսմկմզի Կ մոչրաբխոգատուի վնմոչ Լգոտ
տնմտն նգք վոչնսի նևտ ոյտո : ծղեցմն մզոիեռս նևտ
ժրան ոչոնոն Կ նևոյ : վոյվ նմոտր նսնտիտոչ իտ վլգիտ
զճմսն նևտ տսր նգք մսի Լգչտատոն գ նամտի Կ Երաքմզք
ժղմն ծրան մզոիեռս նևտ մսի Լգչտատոն գ նամտի

: վոյվ վնևտ կվմժսի վր
գ ժտգիտ յրաոտրոնսչ ջմզրոզս վոտիտոգատուանի մսն
-չոտժոմբս մսի Կվսոտր ոնտ գք յտնի Լգիևտմն ժրոնք
-րսճմսնգնևտ գ աղգրոմչոտ զվմգոչոտիտոգատուանի մսի
Կվսոտր ոնտ ծղեցմն ճաիեռս կվմժսի վր նմզոնոյ իտ
-գրեանի մոչոն տգմիզսի զտրոտժոտոն վմգնմոչ նևո

: Լգոնի գ ժտգիտ նվչոյ Կ մրանոն
մտն զտոբխոգատուանի գ ճգր զտոբխոգատուանի նոյ տսր նգք
զք Լգչմսի գ ժտգիտ ճոստ նվոչրոտ Լգ մտրոչ տմ

: մմզոչրաբխոգատու
-տոչոտստ վմգքմզք րս զտոբխոգատուանի մզք Լգոտ
վիևոչ մզք մսիտմտոչ ճգր զտոբխոգատուանի ոնտիտո
: զվսոտր վմգոչրաբխոգատուանի վմգոչոտճմ զվսոտսր
Կ զվսոտնոն Կ գ յրաիտոյ ճգր զտոբխոգատուանի
: Երաիտոն գ զրաոտր զվսոտոյտմն գք զվսոտիտոմոչ վմկ
-մզի մզք մոչրաբխոգատուանի մզք Կնի գք վոչրս մզոյնևտ
զոչնմո զոչրաբխոգատուանի մզք գք Կնիտոմզ գ ճաիտոնի
մոչոն վժոտտոյտո մզք մսի Կն : Երաքմզք մզք մոչր
-ճրա վմնոյ նևտ ճղոյվի վրաոտոչոչ ոչոնչոյ ծրան
: մոչրաբխոգատուանի ճոստ վմգքմզք գ ճաիմն յրաժնոք
-ըմ տիսգրք մսի Կնիտոյ վմբս վր ծղեցմն յրոն
: իսճն վսոտմզք զտիտճրաժոնտոյ ծղմոտ ոչոն ոչրա

: Երաբ
-տվեցնսի զտիտմնոմոյ վմգքմզք վստոն գոսն յտնի Կ Երա
-րաբխոգատուանի մսոյ վիվսիտ զտիտնկոքնք յտնի Կն
-գոնկիտքնքնրանն ծղեցոչք մոչոն նևո : սոտոմսիտոստ
գոսն միտոյնչս վմբսնոչոտմոն նվնոտմզ Կմոչրաբ
-տիտքմզք վմգոչրաբխոգատուանի նևտ ծղեցոչք : մմզոչ
-դք վմգոչրաբխոգատուանի ծվսոտոտ ոչոտր վսոտմզք
զվսոտժոտմոտոչոտի զտոբխոգատուանի մզք ծղոտոյտո
: մտրոչ վմգք մզք ծղեցոչք ոչոն զտիտնոյ յրոն

: մմզոչմոչոյ զտոբխոգատու
-տոտոչոտ ծղեցմն յտիտոյմս : մտրոչ վմգքմզք մզք Լգիտոն
զոնոն տմի զտրոյն նոտմն ծղեցատոյտո Կ Երաժնոքըմ
տիսգրք ճոստ վմգքմզք զվսոտոգատուանի գ յրաչն մո
-րաբխոգատուանի ոնտ մսի Կնիտոյ վոչոն վր ծղեցմն

: Լգիտոն
Երաքմզքմզք գ յտգիտ մոչրաբխոգատուանի : մմզոչնմս
-մսոյ ճաիտ զտոբխոգատուանի Լգտոմի յրաքմզք մզ
նոչ Լգտոմիտ գ ժտգիտ յլևտ Կտնմտի վսոյն ոչոտոյ ճաի
մոչրաբխոգատուանի Լգ մտրոչ տմ : Լգտոտմտոն մզքմզք
զոչոչմսիտ ոչվմզոչնևտիտոչս մսի Կմտրոչ տմ ոչ վմ
-մզք զվճարոտ ոչ յրաիմն մմզոչրաբխոգատուանի մզք

ԻՎՍՄՈ ՂՈՑՍՎՍՈՍՄՈՒՆ
ՈՅՈ ՍԳՂՆՈՍԿՆՈՒՄՈ ՂՈՒՆՈՒՆՍԻ

: վոչոտ ոնտ ոյտոչոչ վլգիտ գ ժտգիտ մզքմզք
րսնոյ գք ծղեցնեռնոն : մս զոչոտ Կք ճգր րս մ
Կտնոչոտ Կսիմզի մզքմոն Կոչր մս ոտո Կոչոտ ոնտ
վսոյն Կ գ նամտի կոչր մս Կոչոն մզքմզք մզք Կն

: նևտ Լգոտ վսոյն ոչոնոյ Կ Լգմսիտն
վսոյն Կնոչ : Լգմսիտն զոչոչրաբխոգատուանի տիմս ծաննմ
գ մսիտիմոչ յրաքմզք վստոն զվսոտոգատուանի Կն

: Երաժնոքըմ տիսգրք զվմգքմզք մզք Լգնևտոտոն ծրան
ժգ նամտի մզքմոչ րս մզոտոյ վսոյն ոչոն վլգ Կն
: վոչոն (մզոչրաբխոգատուանի) մզքմզք գ ժտգիտ
նվնոչոտմսի մզքմզք նևտնոչոտնոն ոչոտր րսնոչոտ

քում և վորոնց մասին պետք է տեղեկութիւն տալ պատի
թերթում: Սորհրդակցեցեք ձեր կուսակազմակերպչի
հետ, թե ճի՞շտ էք նախատեսել արդյոք: Գուցե նա
կըրացնի ձեր կազմած ցուցակը:

Ստուգիչ հարցերում այսպիսի մի հարց կա. «Ելի
ինչպիսի՞ թեմաներ ու հարցեր կարող եք դուք առաջա-
դրել ձեր թերթին ձմեռվա ընթացքում»: Մտածեցեք
դրա մասին և կազմեցեք այն խնդիրների լրացուցիչ ցու-
ցակը վորոնք այս դասախոսութեան մեջ չկան: Ձեր ա-
ռաջադրած յուրաքանչյուր թեման բացատրեցեք և սուս-
ցեք, թե դուք ինչպես կսկսեք լուսարանել այդ խնդիրը:

Ձեր կազմած այդ ցուցակն ուղարկեցեք «Սորհրդային
Հայաստան»-ի խմբագրութեանը: Յեթե այդ թեմաները
հետաքրքիր լինեն, մենք անմիջապես կտպագրենք և կու-
ղարկենք բոլորին, վորպես սույն դասախոսութեան լրա-
ցում:



14993

98

ՅՐԳՈՒՄ Ե ՏՐԻ

Б. Резников

Колхозная стенная газета зимой

Издательство КП(б)А—„Хорурдаин Айастан“